

ԽՈՐԷՆ ԸՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱԼՓԱՅԵՑԵՆԱԾ ԵՒ ՆԱԼԲԱՆԴԵՑՆՑԻ «ԸՂՑՄԻՔԸ» *)

ԴԼՈՒԽ Ե.

Խորէնի գրական զբաղմունքի արդիւնքը Թէոդո-
սիալում եղաւ չորս երկի հրատարակութիւն. 1861
թուին նա լոյս ընծայեց «Արշակ Բ.» ողբերգութիւնը,
1863 ին «Լարդենիք» կոչուած գրաբառ բանաստեղ-
ծութիւնների հաւաքածուն և 1862 ին «Ալաֆրանկա»
կատակերգութիւնը և «Յանգարան»-ը կամ «Բառգիրք
լանգաց»:

Արշակ Բ.-ի թշուառ թագաւորութեան և եղերա-
կան վախճանի նիւթը մեզանում շատերն են եթէ ոչ
մշակել, գոնէ, ձգուել մշակել ողբերգութեան համար—
Բեշիկթաշլեանը, Էմմանուէլ Եսայեանը, Թովմաս Թեր-
զեանը, բայց, մեր կարծիքով, ոչ մէկը դոցանից այն-
պիսի յաջողութեամբ չի կատարել արդ գործը, ինչպէս
Խորէն Գալֆայեանը, Ողբերգութիւնը, ինչպէս լալտնի
է, թատերական գրուածների այն ճիւղն է, որի մէջ
Հեղինակը պատկերացնում է մեզ մի որև է անձի հո-
գեկան տանջանքը մեր գութը շարժելու համար, մեզ
ստիպելու ցաւակցելու, համակրելու նորան։ Ամեն մի
ողբերգական գործողութիւն առհանարակ մարդու այն
շարշարանքը, տանջանքը և մահն է, որ մեր սիրտը
լցնում է արհաւելքով, սարսափ է ձգում մեր վերալ։
Սակայն այդ արհաւելքը, սարսափը, գութը, համակ-
րութիւնը և ցաւակցութիւնը պէտք է որ լարուցուած
լինի մեր մէջ դէպի չարչարուողն ոչ արտաքին հան-

1) Տես «Լումայ» № 4. 1893 թ.

գամանքներից, այլ մի գործողութիւնից կամ շատ գործողութիւնների ամբողջութիւնից։ Դոքա, այդ սարսափն ու գումարը լարուցուում են մեր մէջ նա մանաւանդ, երբ որ գործողութիւնները կատարուում են յանկարծակի և մի գործողութիւնը լինում է միւսի հետևանքը, արգասիքն անմիջապէս։ Ողբերգական անձի տանջանքն առաջ է գալիս նորա մէջ գլխաւորապէս ներհակ հակումների և պարտականութիւնների մաքառումից—սրտի հակումների և բարոյական պարտականութեան, կամքի և խոհականութեան, կրքերի և խոհականութեան մաքառումներից։ Բնական է, որ քանի զօրեղ լինի ողբերգական անձի տանջանքի առիթը, որքան խոր հանգամանքներից առաջ եկած լինի նա, այնքան էլ հետևաբար խոր ու զօրեղ կլինի և մեր ցաւակցութիւնը դէպի նա։ Եթէ ողբերգական անձի տանջանքի պատճառները նորա սեփհական կրքերից և նորա այդ կրքերի դէմ մաքառելու անկարողութիւնից կամ թուլութիւնից են առաջ գալիս, մենք, ի հարկէ, աւելի քիչ ենք ցաւակցում, համակրում նորան. Եթէ ընդհակառակը, նորա տանջանքի պատճառները նորա կեանքի այնպիսի հանգամանքներն են, որոնց դէմ չէր կարող մաքառել նա, չէր կարող կամ լաղթել նոցա, կամ խուսափել նոցանից, թէև նա դորա համար ունենար և' յօժարութիւն, և կամք, և' մաքառելու կարողութիւն, այդպիսի մարդուն մենք աւելի ենք համակրում, ցաւակցում։ Մեր ցաւակցութիւնն այդ դէպքում մանաւանդ զօրեղանում է, եթէ հերոսն ի զուր տեղն է տանջուում, չարչարւում, եթէ նա բոլորովին անմեղ է և միայն տանջուում է նախախնամութեան վճռով, կամքով։ Յամենայն դէպս ողբերգական անձի մեր մէջ յարուցած համակրութեան աստիճանը սերտ կապերով կապուած է տանջանքին, ողբերգական գործողութիւնան առիթ եղած հանգամանքների հետ. որքան մեծ և բարձր է այն բարոյական օրէնքը, որի համար հերոսը մաքառում է իրան թշնամի և հակառակ բարոյական ոլժերի դէմ, այնքան խոր և զօրեղ է և մեր ցաւակցութիւնը դէպի նա։

Սովորվեսի «Անտիգոնէ» ն ողբերգական անձն է,

որովհետև անմահ ողբերգակի ողբերգութեան մէջ նա մեզ ներկայացրած է ինչպէս մի անձն, որ մաքառում է, իւր անձը զոհ է բերում այն բարոյական օրէնքի համար, որ հրամայում էր, սուրբ պարտականութիւն էր գնում ամեն մէկի վերալ անթաղ շմողնել իւր արենակցի դիակը, թէև նա դորանով օրինազանց էր գտնուում իւր հալրենիքի առաջ, որ պատուիրում էր հալրենիքի թշնամիների դիակները թաղման, յուղարկաւորութեան շարժանացնել, թէև դորանով նա ներկայանում էր իբրև մի մեծ լանցաւոր, որ չէր կատարում կրէօնի, թեքացւոց թագաւորի վերոլիշեալ հալրենապաշտպան օրէնքը հրատարակողի հրամանը: Ալստեղ, ինչպէս կարելի է տեսնել, երկու մեծ բարոյական օրէնք պատահում են միմեանց և առաջ է գալիս մի սրտաճմիկ ողբերգական գործողութիւն, որի մէջ ողբերգական անձն Անտիգոնէն և՝ մեղաւոր է և՝ անմեղ: Նա մեղաւոր էր, որ չէր կատարել իւր հալրենիքի շահերը պաշտպանող օրէնքը. նա թաղել էր իւր սպանուած եղբօր դիակը, որ գաւաճանել էր հալրենիքին. նոյն ժամանակ նա և մեղաւոր չէր, որովհետև դորանով կատարել էր նոյն հալրենիքի մէջ գոյութիւն ունեցող մի ուրիշ սըրբազն օրէնք—օնպատճառ հողին լանձնելու արենակիցների դիակները: Երկու հակառակ ոյժերի մէջ գըտնուող, երկու ներհակ հակումների մէջ տանջուող, երկու մեծ բարոյական օրէնքների ծանրութեան տակ ճնշուող իւր ողբերգական դրութեամբ Անտիգոնէն զօրեղ կերպով շարժում է մեր գութը, ճմլում է մեր սիրտը և առատ արտասուք է քամում մեր աչքերից:

«Կորիոլանը»-ը ողբերգական անձն է, որովհետև գտնուում է, տանջուում է երկու հակառակ զգացմունքների, հակառակ հակումների մէջ. մէկը պահանջում էր, որ նա կատարէ իւր վրէժխնդրութիւնը Հւովմից, միւսը ստիպում էր նորան հնազանդել, խոնարհել իւր քաղաքացիական պարտականութիւնների առաջ և տեղի տալ իւր ամուսնու և մօր աղաչանքին, թախտնձանքներին: Ալստեղ երկու հակառակ սկզբունք բարոյապէս մաքառում են միմեանց հետ—ընտանեկան և քաղաքացիական պարտականութիւնը մաքառում է սեփական

անձի արժանաւորութեան գէմ, որ և ստեղծում է մի ողբերգական դրութիւն հերոսի համար, որ նոյնպէս զօրեղ կերպով շարժում է մեր գութը դէպի նա, դէպի հոգեպէս տանջուող, չարչարուող Կորիոլանը:

Ենքսպիրի Համլէտը նոյնպէս ողբերգական անձն է, որովհետեւ նորա մէջ գարձեալ մաքառում, մրցում են երկու սկզբունք, երկու զգացմունք-կամքը և գիտակցութիւնը: Դաւաճանութեան զոհ գնացած հօր ձախնը, որ հնչում է նորա ակաջին «անդի աշխարհից» և դրդում, մղում է նորան վրէժխնդիր լինելու, մի կողմից ստիպում է նորան սպանել դաւաճանին, միւս կողմից ընդհարւում, կանդ է առնում մի մեծ արգելքի դէմ. ահոելի է թւում նորան գործելիք լանցանքը և միւս կեանքի հատուցումն, որ սպառնում է նորան ապագարում, միշտ կասեցնում է նորա վճռականութիւնը: Եթէ մենք այս ողբերգութիւնների օրինակով չափելու լինենք Խորէնի «Արշակ» և կամենանք գտնել նորա մէջ մաքուր ողբերգութեան յատուկ բոլոր վերոլիշեալ տարերքը, անկասկած, շատ կողմից պակասաւոր կդտնենք նորան: Ամենագլխաւոր պակասութիւնը հէնց այն է, որ գորագլխաւոր հերոսի, Արշակ Բ-ի մէջ, որ ողբերգութեան ողբերգական անձն է, չի երկում սկզբունքների մաքառումն, հակումների, զգացմունքների ներհակութիւն, որ ամեն մի մաքուր ողբերգութեան գլխաւոր յատկանիշն է և որից տիրապէս առաջ է գալիս ողբերգական անձի և ողբերգական դրութիւնը: Խորենի ողբերգութեան երկրորդտկան՝ անձնաւորութիւնների մէջ ալդ յատկութիւնը մինչև անգամ աւելի շօշափելի է: Շապուհը սահպուած է լինում լուծանել պարսից այն օրէնքը, որ հրամայում էր Անլուշ-բերդում փակուսներին մինչև մահ մոռանալ, և թոլլ է տալիս Դրաստամատին երթալ տեսնել Արշակին, որ հինգ տարի փակուած էր մահապարտների բերդում, և մինչև իսկ կարճ միջոցով ազատել նորան կապանքներից և հանել բանտից, որովհետեւ չի կարողանում մերժել այն մարդու խնդիրքը, որ ազատել էր իրան մտհից և որին նա խոստացել էր ամեն բան տալու, ինչ որ միայն նա ցանկանար: Շապուհի ալդ գործողութեան մէջ հո-

գեկան ներհակ զգացմունքների մաքառումն կալ, որով-
հետեւ մի կողմից նա դժուարանում է քակել Արեաց
այն պետական օրէնքը, որ պահանջում էր, որ Անլուշ
բերդում փակուածներն անպայման կերպով կտրուած
լինեն աշխարհից և կենդանի-կենդանի թաղուտծ ահռե-
լի բանտի խաւարչտին խորքերում, միւս կողմից էլ գը-
ժուարանում է իւր արքայական խօսքը յետ առնել և
ազատչի խնդիրքը մերժելու ծիցտ է ալդ մաքառումը
հեղինակը չի մշակել, չի զարգացրել նորա մէջ, որով-
հետեւ պարսից թագաւորն ողբերգութեան մէջ միայն
երկրորդական անձն է և միայն դուրս է բերուած ող-
բերգութեան ընդհանուր գործողութիւնը լրացնելու
նպատակով, բայց որ նա հոգեալէս բարոյապէս տան-
գլում, մաքառում է —, ալդ հենց երեսում է այն հան-
գամանքից, որ նա, երբ Դրաստամատն ընկնում է նո-
րա ոտքերը և թուլտուութիւն է խնդրում Անլուշ
երթալու, դժկամակելով, և մինչև իսկ բարկանալով ա-
ռաջ մերժում է, յետոյ արդէն համաձայնում է. —

Ել Դրաստամատ. ինչու զքեզ ալնշափ մոռնաս՝

Որ զանօրէն Արշակունին զալդ լիշես.

Թէ չգիտես որ վատն ու պիղծ իւր անուն

Դատապարտած են ի լաւէժ մոռացօնս:

Անլուշ բերդին մէջ մահապարտն որ ընկաւ՝

Այս են օրէնք՝ նա յաշխարհէս է կորած.

Մոռցիր ըզնա և դու, ով քաջ, և խընդըէ

Արժանաւոր շնորհ Արեաց արքայիս:

Դրաստամատ, քեզ ով կուզէ դիմակալել,

Պէտ չէ ահեղ սըրոյդ ելլել առաջի.

Եւ ով կուզէ մոգիչ շրթանց քոց յաղթել,

Պէտ չէ լըսել զառաքինի քո բարբառ:

Պատերազմին մէջ յաղթեցիր թըշնամւոյս,

Եւ արդ ահա և տեառն Արեաց դու յաղթես - :

Ա՛ռ մատանւոյս հետ և ըզնորհ զոր խընդըս

Սա քեզ բանալ Անլուշ բերդին փակ դըռներ.

Թող Սասանեանց անլուծելի ալս օրէնք

Ի պատիւ քաջութեան քո ալսօր լուծուիւ:

Սրտի հակումների և բարոյական պարտականու-

թեան մաքառումն կայ և Պարսկաստան գերի վարուած

ու պարսից զօրքի մէջ գտնուած հալ նախարարների-Վահանի, Դրաստամատի և միւսների մէջ, որոնք կռուում են Պարսից արիւնաբրու թշնամի Քուշանաց Արշակունի թագաւորի դէմ։ Մի կողմէից նոցա անհատական սրտի հակումն մղում է նոցա կատաղաբար կռուելու Պարսից թշնամիների դէմ և քաջութեան հրաշքներ գործելու, որովհետև Նապուհը խոստացել էր ազատել նոցա գերութիւնից և վերադարձնել հայրենիք, եթէ աղթեն, միւս կողմէից նոցա բարոյական պարտականութիւնը դէպէ իւրեանց հայրենիքի օգուտները յետ է մղում նոցա այդ ձեռնարկութիւնից, որովհետև նոքա շատ պարզ կերպով զգում են, որ գորանով զօրացնում են հայերի կատաղի թշնամուն Նապուհին և, ընդհակա ռակը, ինքեանք իւրեանց ձեռքով խորտակում են վերջին Արշակունիներին, Հայաստանի վերջին բարեկամներին ու զօրավիգներին-Քուշաններին։ Այդ հակառակ հակումների բարոյական պարտքի և անձնական երջանկութեան զգացմունքի փոխադարձ մաքառումը շատ գեղեցիկ արտալայտուում է վիրաւորուած Վահանի խօսքերի մէջ, որ ի պատասխան Բաբգէնին, որ միիթարում էր նորան, թէ նա իւր քաջութեան համար Նապուհից կվարձատրուի, արտասանում է—。

Եւ ահա, արդ յաղթեցինք իւր թշնամեաց։

Գիտես նա ինչ շահեցաւ այս յաղթութեամբ—,

Հայաստանի զիսպառապուռ գերութիւն։

Այսօր Նապուհ Քուշաներին կազատի,

Ու անարգել պիտի վաղուան որ վազէ

Որ ստքին տակ առնու բոլոր Հայաստան,

Ու հայրենեացս ազատութեան նշոյլներ

Հասնի մարէ, ու զբաղդ հայոց խաւարէ։

—Ո՛վ Տէր, և մենք, հայքս ինքնին եմք այսօր

Որ պարսկին յաղթող ըրինք ի մեր կորուստ։

Միւս մեծ պակասութիւնը Խորէնի «Արշակ»—ի մէջ այն է, որ մենք շենք կարողանում այնպէս համակրել ու ցաւակցել նորա ողբերգական անձին, ինչպէս որ պէտք էր, որովհետև զգում ենք, որ նորա, Արշակի այդ ողբերգական դրութիւնն առաջ է եկել նորա սեպհական կրքերից և նորա այդ կրքերի դէմ մա-

քառելու անկարողութիւնից ու թուլութիւնից. մենք զգում ենք, ու Արշակը գլխաւորապէս ինքն է մեղաւոր, որ ընկել է այդ գրութեան մէջ, որ նա այդ բոլոր պատրաստել է իւր ձեռքերով, իւր սեփական գործողութիւններով։ Եւ, ճշմարիտ, ինչն է իսկապէս ողբերգականն Արշակի գրութեան մէջ—, որ նա զըրկուել է թագից, գահից, ընտանիքից և բերուել շըրթալակապ բանտարկուել է Անլուշ բերդում, որտեղից ազատում չկայ, որտեղ նա ապրում է միւս մահապարտ ների պէս միայն անասուններին վայել որջում, ուտում է նոցա կերակուրը, հագնում է նոցա շորերը, պառկում է չոր գետնի վերայ, որտեղ ամեն ըոպէ ան պատուում են նորա մեծութիւնը, վիրաւորում են նորա զգացմունքը, որտեղ մինչև անգամ Ալանոզանի պէս մարդիկ համարձակում են խրոխտալ նորա վերայ և որտեղ, վերջապէս, նորան բարոյապէս սպանելու համար, դնում են ի տես նորա սիրելի տիկնոջ Փառանձեմի խրտուիլակը, որին բռնել, սպանել էին պարսիկները, Բալց ովկ է արել այդ բոլորը—Նապուհը—ոչ. նա միայն օգտուել է ձեռնտու հանգամանքներից. ինքն Արշակը, Արշակն է արել այդ բոլորը, նա էր, որ իւր մեղմեխ քաղաքականութեամբ կորցրել էր իւր հաւատարմութիւնը թէ պարսից թագաւորի և թէ Բիւզանդիոնի կայսեր առաջ։

Ասենք թէ Հայաստանի գրութիւնն Արշակի ժամանակները շատ էլ նպաստաւոր եղած չէ, նորա կացութիւնն երկու մեծ տէրութեան մէջ շատ էլ անվըտանգ չէ եղել նորա թագաւորի համար, բալց և ալնպէս Արշակի տեղ ամեն հեռատես, տակտով մարդ կարող էր պատուով գուրս գալ սպառնացող վտանգից, առնուազն չընկնել այն գրութեան մէջ, որ մեզ պատկերացնում է Խորէնի ողբերգութիւնը։ Նա էր, որ Արշակաւանը շինեց, նա էր, որ խեղդամահ արեց իւր հօրը, նա էր որ Կամսարականների համարեա ամբողջ ցեղը ջնջեց, նա էր, որ սպանել տուեց իւր արենակից Գնէլին, նա էր, որ, հակառակ եկեղեցական օրէնքներին, կնութեան առաւ Գնէլի կնոջը Փառանձեմին, որ թագուհի դառնաւու համար, յայտնի բան է ոչ առանց

գիտութեան և յասնակցութեան Արշակի, Տէր-Մըջիւնիկի ձեռքով թունաւորեց Ողիմպիադէ թագուհուն։ Արշակն էլ, ի հարկէ, սղբերգական անձն է, նա էլ տանջուում, չարչարուում է հոգեպէս և ֆիզիքապէս և իւր ողբերգական դլութեամբ շարժում մեր գութը, յարուցանում է մեր մէջ ցաւակցութիւն և համակրութիւն, բայց նորա ալդ տանջանքը Անտիգոնէի, Կորիոլանի և Համլէտի ողբերգական դրութեամբ շարժած, յարուցած համակրութեան, ցաւակցութեան և գութի գորութիւնը չունի։

Մեզ կարող են հակաճառել, թէ Արշակի գործածները, արածներն ողբերգութեան մէջ չկան, թէ մենք պէտք է դատողութիւն անենք, քննադատենք միայն ալն նիւթը, որ կայ ողբերգութեան մէջ։ Ալո՛, ալդ ալդպէս է, բայց միայն ողբերգութեան ալն հերոսների վերաբերմամբ, որոնց պատմութեան հեղինակն է միայն ինքն ողբերգակը և մենք ամեն բանում միայն նորան պէտք է հաւատանք. իսկ ինչ որ վերաբերում է պատմական անձերին, — մենք չենք կարող նոցա կեանքի ու գործունէութեան մասին դատել միայն ալն նիւթի հիման վերալ, որ մենք գտնում ենք մէկի գրուածքի մէջ, որովհետեւ ալդ անձինք պատմութիւն ունին, որ անտես անել ոչ մի հեղինակ կարող չէ, իրաւունք չունի։ Եւ յետոյ չի կարելի ասել, թէ Խորէնի ողբերգութեան մէջ Արշակի Հայաստանում կատարած գործերի մասին ամենեին տեղեկութիւն չկայ ծիշգէ, մեր լիշած եղերական գործերը մէկ մէկ մէջ չեն բերուած, բայց ընդհանուր, շատ ընդհանուր կերպով ակնարկութիւն կայ նոցա մասին։ Չորրորդ արարուածում, երբ Դրաստամատը համոզում է Արշակին փախչելու և իրան թողնելու իւր տեղը բանտում և ալդ բանի կարեսորութիւնը մեկնում է նորանով, որ Արշակն աւելի հարկաւոր է Հայաստանին, քան թէ ինքը, Արշակը յուսահատ պատասխանում է. «Բայց հայրենիք զիս մոռցանա»։ Ուշադիր ընթերցողը, յալտնի բան է, ինքն իրան կմտածէ թագաւորի ալդ խօսքերի վերալ և կհարցնէ, թէ բնչու հալրենիքը մոռացաւ Արշակին, և հե-

տեապէս նորա մտքում կզարթնեն լիշողութիւններ Արշակի կեանքի ու գործունէութեան մասին Հայաստանում, ուրեմն, և նորա գործած այն եղերական գործերի մասին, որ մենք վերն լիշեցինք:

Խորէնի «Արշակ»-ը, բացի մեր լիշած ալդ գլխաւոր կէտերի պակասութիւնից, որոնք աւելի վերաբերում են ողբերգութեան ներքին բովանդակութեան, հոգեբանական մասին, պակասաւոր է և իբրև պատմական ողբերգութիւն: Ողբերգակ հեղինակները, ի հարկէ, մինչև անգամ և պատմական նիւթի մշակութեան գործում մի լայտնի աստիճան տղատութիւն են փայելում, բայց արդ աղտութիւնը պէտք է լինի միայն նիւթի մշակութեան մանրամասնութիւններում և ոչ թէ գլխաւոր մասերում կամ կէտերում: Պատմութեան գլխաւոր գէպքերը, պատմական անձանց բնաւորութիւնը, ժամանակակից կեանքի սարք ու կարգը պէտք է ընդհանրապէս ճիշդ լինեն, պէտք է համաձայն լինեն պատմութեան: Հօ չի կարելի պատմական գալերին գառնուկներ ձևացնել և ընդհակառակը, չի կարելի անցեալի պատմական կեանքը ներկայի վերալ չափել, ներկային յարմարեցնել, չի կարելի նոյնպէս անցեալը ներկայացնել այնպէս, ինչպէս որ մենք կցանկալինք, որ լինէր, և ոչ թէ այնպէս, որ իսկապէս եղել է: Մենք ոչինչ չունինք ասելու, երբ Խորէնը Արշակի և առհասարակ ժամանակակից կեանքի մի քանի մանրամասնութիւններն այնպէս չի ներկայացնում, ինչպէս որ պատահել կամ եղել է պատմութեան մէջ ոչինչ չունինք, օրինակի համար, ասելու, երբ նա Դրաստամատին ուղարկում է Անլուշ-բերդը ոչ միայն Արշակին տեսնելու և մի օր միայն ուրախացնելու նորան, ինչպէս եղել է իսկապէս, այլ և ազատելու նորան և ինքը նորա տեղ բանտում մնալու, ոչինչ չունինք նոյնպէս, երբ Ալանողանը դնում է բանտում Վասակի յարդարից խրտուիլակի տեղ Փառանձեմինը, բայց չենք կարող մատնացոյց չանել և սխալ չհամարել այն ընդհանուր տիրասիրութեան յատկութիւնը, որ Խորէնը վերագրում է հալ իշխաններին: Խորէնն իւր ողբերգութեան մէջ բոլոր հալ իշխարարներիններկայացնում է ինչպէս վերին աստիճանի տիրասէր մարդիկ և մեծ հալբե-

նասէրներ. բացի դորանից, նա Շապուհի բերանը գնում է այնպիսի խօսքեր, որոնք ընդհանրացնելով, այդ տիրասիրութեան յատկութիւնը վերագրում են ոչ թէ միայն ողբերգութեան մէջ գործող հայ իշխաններին, այլ և ընդհանրապէս բոլոր հայ իշխաններին. Առաջին արարուածի վերջում, երբ Շապուհը մինչև անգամ թագ և ծիրանի խոստանալով Դրաստամատին, չի կարողանում նորան համոզել, որ նա աւելի վերադասէ իւր անձնական շահը, քան թէ իւր թագաւորին մի օրուայ համար միայն ազատելլ շղթալից, հետևեալ խօսքերն է ուզզում բոլոր հայ իշխանների հասցէին.—

Երանի՞ ով որ ունի ձեռին ըզնալեր.

Ո՞վ այսպիսի քաջ ժողովուրդ է տեսեր,

Եւ ո՞ւր այսպէս անձնանուէր իշխաններ.

Հայեր, թէ դուք ինչպէս ըզտէր ձեր սիրէք,

Նոյն սիրով եղբալը զեղբալը թէ սիրէիք,

Ո՞վ ձեր ահեղ կրնար ուժոյն դէմ կենալ,

Ո՞վ կրնար ո՞վ լլսել Հայու գոռ անուն,

Եւ ի սըրտին շըզգալ երկիւղ և սարսուռ:

Մենք ոչինչ չունինք տսելու, որ վերոյիշեալ պատմական անցքերն այնպէս չեն պատմուած, ինչպէս որ Բուզանդը ներկայացնում է մեզ իւր արժանի ուշադրութեան պատմութեան մէջ, որովհետև դոքա այնպիսի պատմական մասնաւոր շեղումներ են, որոնք չեն վնասում Հայոց պատմութեան էական կէտերին, չեն հակասում նորա ընդհանուր բնաւորութեան—դոքա, այդ շեղումները մինչև անգամ հարկաւոր էլ են ողբերգութիւնը զարգարելու, նորա գործողութիւնը զարգացնելու համար,—բայց չենք կարող թոյլ տալ երկրորդ տեսակի շեղումները, որոնք մասնաւոր չեն, որոնք հակասում են Հայոց պատմութեան ընդհանուր բնաւորութեան: Հայոց թագաւորներն ունեցել են, ի հարկէ, և ուրիշ տիրամէր Դրաստամատներ, Վասակ զօրավարներ, Վահաններ, բայց դոքա անհատներ են միայն եղել, համեմատելով այն բազմաթիւ ազատների հետ, որոնք ընդհանրապէս տիրատեաց և տիրանենգ են եղել: Հայոց բազմաթիւ նտխարարութիւնն իւր ամբողջութեամբ իւր անձնական շահերը միշտ վեր է դասել ընդհանուրից,

միշտ փոս է փորել իւր թագաւորի ոտքերի տակ, միշտ ապստամբել, միշտ գնացել, յարել օտարներին և դորանով մի ալնպիսի ցաւալի դրութիւն է ստեղծել, որ Հայոց թագաւորը և դորա հետ միտափին և Հայոց ամբողջ տէրութիւնն երբէք չի ամրացել, կատարելապէս երբէժ չի հաստատուել. Ի զուր չեն եղել այն խօսքերը, որ Արշակունեաց վերջին Արտաշիր թագաւորն արտասանել է Վռամի առաջ իւր իշխանների վերաբերութեամբ «Որպէս սովոր են ի բնէ թշնամանել զտեարս իւրեանց ըստ նմին օրինակի և ալժմ կամին կատարել զշար կամաց իւրեանց զիսնդիրս, քանզի միշտ իշխանափոխք լեալ են և տիրատեացք»: Ալո՛, Հայոց իշխանները տիրասէր են եղել, հաւատարիմ են եղել, անշահասէր են եղել, իւրեանց ստացուածքը, իւրեանց բոլոր ազգալին նուիրական աւանդութիւնները, մինչև իսկ իւրեանց կետնքը զոհաբերող են եղել, բայց ոչ իւրեանց հարազատ, բնիկ տէրերի վերաբերմամբ, այլ օտարների: Այդ մեր պատմութեան ընդհանուր բնաւորութիւնն է եղել, ալդ մեր մեծամեծների ընդհանուր ազգալին յատկանիշն է եղել և է:

Սակայն եթէ Խորէնի «Արշակ»-ը իւր վերոյիշեալ երեք խոշոր պակասութիւններով չի կարող իսկական ողբերգութիւն համարուել ու դասուել կլասիքական ողբերգութիւնների շալքը, որոնց ընտիր օրինակների հետ մենք չենք էլ վստահանում համեմատել նորան, այնուամենայնիւ նա վեր է Հայոց բազմաթիւ թէ նոյն նիւթին վերաբերեալ և թէ առասարակ միւս ողբերգութիւններից շատ շատերից նա աւելի բեմական է, աւելի բանաստեղծական է և, որ գլխաւորն է, նորամէջ պատմական նիւթը համեմատաբար աւելի լաւ է մշակուած, քան թէ մեր միւս ողբերգութիւնների մէջ: Խորէնը, մեր կարծիքով, բաւականին ճիշտ է ըմբռնել Արշակի բնաւորութիւնը. նա նորան ներկալացրել է իբրև մի գոռոզ, աննկուն մարդ, որ երբէք չի վհատում, երբէք գլուխ չի խոնարհեցնում, որ ազատութիւնը վերադասում է ամեն բանից, որ իւր գործողութիւնների մէջ սիալ, ծուռ բան չի տեսնում, որ ամբողջ երեսուն տարի իւր փոքրիկ, թոյլ ոյժերով կռուում է

Պարսից հզօր թագաւորի դէմ և այնքան ինչ աշխատ առնէ զնա» և միայն ընկճուում, բռնուում է այն ժամանակ, երբ այլ ևս խպառ ոյժ չի մնում, երբ բոլորեքեան թողնում հեռանում են նորանից:

Հազիւ թէ Արշակն իւր գործած լանցանքների ծանրութեան տակ այնքան ճնշուած լինէր, այնքան տանջուած լինէր հայրասպանութեան խղճի խալթոցից, հազիւ թէ նա այնքան զգացած լինէր իւր Աստուծուց ու եկեղեցուց հեռացած լինելը, որ բոլորովին վհատէր և ինքը պատրաստ լինէր անձամբ իրան մատնել Պարսից ձեռքը, ինչպէս նորան ներկայացնում է Բ: շիկթաշլեանը, մասամբ և էմմանուէլ Եսայեանը: Անկասկած, նա իւր գործողութիւնների մէջ այնքան ինքնամուացութեան է հասած եղել, այնքան անձնատուր է եղած եղել իւր կրքերին, որ չի զգացել իւր լանցանքների ծանրութիւնը, չի հասկացել իւր գործողութիւնների ապօրինութիւնը: Նա սպանել է տուել իւր արենակից Գնէլին, իւր հօրը Տիրանին, որովհետև առաջինն եկել բնակութիւն էր հաստատել Այրարատում, որ Արշակունեաց օրէնքով ապստամբութիւն էր համարուում, իսկ երկրորդը պաշտպանութիւն էր ցոյց տուել նորան, նա մասնակցել է Ողիմպիադափի թունաւորութեան գործին, որովհետև չի սիրում եղել քաղաքական դիտումների շնորհիւ սիայն իրան լծակից եղած այդ լոյն կնոջը, այլ ընդհակառակը. սիրահարուած է եղել Փառանձեմի վերալ. նա ջնջել է Կամսարականների ցեղը, որովհետև դոքա են եղել ապստամբ նախարարների գլուխը, նախարարների, որոնց ապստամբութիւնն այնքան վնաս հասցրեց տէրութեան և այլն և այլն:

Զպէտք է մոռանալ, որ այն ժամանակները բռնակալութեան դարեր էին և Հայոց թագաւորը միւս բռնակալներից բացառութիւն չէր կազմում. իսկ բռնակալների հասկացողութեամբ ամեն բան, որ արգելք էր լինում բռնակալի ցանկութեան, կամքին, պէտք է սրով-թրով, թոյնով ոչնչանար. աւետարանի քարոզութիւնն էլ Հայաստանում գեռ այնքան ազդեցութիւն չէր արել վարք ու բարքի կոպտութիւնը մեղմացնելու գործում, որովհետև քրիստոնէութիւնն այն ժամանակ-

ները դեռ այնքան թոյլ է եղել, այնքան խոր արմատ չէ բռնած եղել Հայերի հոգու ու սրտի մէջ, որ Հայոց թագաւորներն ու մեծամեծները շարունակում են եղել, ըստ ամենայնի, հեթանոսական կեանք վարելլ:

Որ Արշակը խղճի խայթոցներից ընկճուած չի եղել, երբ բռնուել է, —այդ երևում է այն հանգամանքից, որ նա մինչև վերջին ըոպէն աշխատել է պաշտպանուել, չընկնել Պարսից ձեռքը, թէ և արդէն ոչ մի լոյս չեմ մնացած եղել ազատուելու համար. նա մինչև իսկ աշխատել է Ալանողանին, որ եկել էր նորան բռնելու, իւր կողմը քաշել և ալդպէս ազատուել, լիշեցնելով նորան նորա Պարթև լինելը, ուրեմն, և իրան ազգակից և արենակից լինելը: Մեզ կասեն, ապա Բնչու համար նա անձնասպանութիւն է գործել, եթէ նա իւր գործած մեղքերի ծանրութիւնից մի տեսակ խելտգարութեան հասած չի եղել, և ինչ են նշանակում այն խօսքերը, որ նա սփոռոցի վերալ դրած հացի դանակն իւր կուրծքը միշելուց առաջ արտասանել է - «վայ ինձ Արշակայ ալսպէս և ալս և յալսմ չափու և ալս անցին ընդ իսու: Մենք կասենք, որ ալդտեղ խղճի խայթոցը, յանցանքների ծանրութիւնը գործ չունին: Հինգ տարի շարունակ նա փակուած է եղել ահուելի բերդում, հինգ տարի կտրուած է եղել լոյս աշխարհից և յանկարծ ազատուել է, ազատ շունչ քաշել, մաքուր օդ ծծել: Բնականապէս Արշակի պէս ազատութիւն սիրող մարդն ալլ ևս չէր կարող թոյլ տալ, որ նորից զրկեն իրան ալդ ազատութիւնից, և աւելի լաւ կհամազէր վերջ դնել իւր կեանքին և մեռնել ազատ, չընկճուած, քան թէ նորից վերադառնալ մութ Անլուշը, որտեղից ալլ ևս ազատութիւն չկար: Իսկ նորա մահից առաջ արտասանած խօսքերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի շատ պարզ լիշողութիւն իւր գլխով անցած գնացած անցքերի, որ սովորաբար մարդիկ լիշում են իւրեանց վերջին, նեղ ըսպէներին:

Եթէ մի պակասութիւն կարելի է գտնել ողբերգութեան պատմական նիւթի մշակելու գործում Արշակի բնաւորութիւնն որոշելու վերաբերմամբ, — այդ անկասկած, այն է, որ Խորէն վարդապետը չի օգտուել

Բուզանդի պատմած Շապուհի հողով ու ջրով Արշակին փորձելու դէպքից, որ շատ հետաքրքրական է և կարող է ճշգիւ բնորոշել Արշակի բնաւորութեան մի կարևոր կողմը, որ 'ի նկատի է առել և որից օգտուել է Եսարեանը: Անպատեհ, գուցե, չլինէր, եթէ ողբերգութեան մէջ տեղ տրուէր և Վասակ Մամիկոնեանին, որ, ինչպէս յայտնի է պատմութիւնից, Արշակի անբաժան ընկերն է եղել նորա բոլոր 34 տարուալ պատերազմներում, նորա աջ թեն է եղել, նորա հետ բռնուել, տարուել է Պարսկաստան և մորթեզերծ լինելով, խըրտուիլակի ձեռով դրուել է Արշակի բանտում: Ալդ փոքրիկ պատմական աւանդական միջնադէալը կլրացնէր Արշակի բնաւորութեան սահմանը, որովհետև Վասակն իւր բնաւորութեամբ շատ նման է եղել Արշակին. նա նոյնքան գոռող, նոյնքան հպարտ ու աննկուն է եղել, որքան ինքը թագաւորը, և իւր ալդ յատկութեամբ միշտ սիրտ է տուել թագաւորին, միշտ վառ է պահել նորա սրտում ազատութեան, անկախութեան հոգին:

Փաւստոս Բուզանդացին պատմում է, որ երբ Վասակը ներկայացել է Շապուհին, այս վերջինը սկսել է նախատել նորան, ասելով. «Աղուէս, դու էիր, որ այս չափ յոգնեցրիր մեզ. դու էիր, որ այսքան տարի կոտորեցիր Արեաց քաջերին: Ալժմ ինչ պատասխան պիտի տաս. աղուէսի մահով պէտք է սպանել տամ քեզ»: Վասակը պատասխանում է. «Ալժմ դու ինձ անձամբ փոքրիկ ու կարճահասակ տեսնելով, չկարողացար իմ անձիս մեծութիւնը ճանաչել, որովհետև ես մինչև հիմալ քեզ համար տուիծ էի, իսկ ալժմ աղուէս եղալ: Բայց քանի որ ես այն Վասակն էի, ես մի հսկայ էի. մէկ ոտքս մէկ լերան վերայ էր լինում, միւսը միւս լերան. երբ ընկնում էի աջ ոտքիս վերայ, աջ լեառն էր գետինն անցնում, երբ-ձախիս վերայ, ձախն էր գետին անցնում: Շապուհը հարցնում է. «Ձես մեկնիլ արդեօք որոնք են այդ լեռները»: Վասակը պատասխանում է. «Ալդ լեռներից մէկը դու էիր, միւսը Յունաց կալսը: Քանի որ ես ոյժ ունէի, քեզ, կամ Յունաց թագաւորին էի գետին անցնում, որովհետև Մեծն ներսիս օրհնութիւնը մեր վերայ էր և Աստուած մեզ իւր ե-

քեսից չէր ձգել. քանի որ մենք նորա խօսքին լսում էինք և ամեն բանում հնազանդ էինք նորան, գիտէինք քեզ խրատ տալ. այժմ մենք ինքեանքս բաց աշքով ընկանք խորխորատը—, ապա ուրեմն, ինչ որ կուզես, արա»:

Եւ Շապուհը հրամալել է մորթւղերծ անել նորան և յարդալից անելով նորա մորթը, տանել դնել նորան Արշակի բանտում ի տես:

Խորէն վարդապետը ձեռնարկելով իւր ողբերգութիւնը գրելու, երկու նպատակ է դրել իրան. նախ, յիշեցնել կամ զարթեցնել անցեալի յիշատակն ընթերցողների և ուկնդիրների սրտում, երկրորդ, ներշնչել սէր գէպի հայրենիքը։ Եւ այդ նպատակներին նա կամեցել է հասնել երկու միջոցով՝ իւր հեղինակութեան գրուածքի ձեռով և լեզուով և իւր գրուածքի նիւթի ինքնուրունութեամբ։ Նա իւր ողբերգութեան նիւթն առել է ազգային պատմութեան հետաքրքրական շըրջաններից մէկից, ամբողջ գրուածքն ինքն է ինքնուրունաբար հեղինակել, առանց մինչև անգամ մի տող փոխ առնելու ուրիշներից, գրուածքի մէջ գործ է դրել անլանգ ոտանաւորի մետասանոտեան եռանդամ չափը, թէև մինչև այդ ժամանակները իւր թարգմանած բազմաթիւ ողբերգութիւնների — Ալֆիէրիի «Սաւուղի», Ռամինի «Գոթողիալի», Կոռնէլիի «Պողիկտոսի», Վոլտերի «Զալիրէի», Առնոլդի «Մարիոսի», Ենքսպիրի «Կեսարի» և Նիլերի «Ստուարտի» մէջ նա գործ էր դրել Արսէն Բագրատունու տաշարկած քառանդամը, և բոլոր գըրուածքը շարադրել է աշխարհաբառ լեզուով, որ բոլոր քննթերցողներին էլ հաւասարապէս հասկանալի լինի։ Սակայն նա հասել է իւր նպատակին ոչ բոլորամասն և կատարելապէս։ Ճիշդ է, նա իւր առած նիւթի համեմատաբար բաւարար մշակութեամբ, ազգասիրական զգացմունքի առատ զեղմունքով, ընտրած ոտանաւորի չափի ներդաշնակութեամբ, գործողութիւնների ողբերգական հանգուցներով ճարտարութեամբ միմեանց հետ կապակցելու յատկութեամբ, մտքի, իմաստի ոլորածոյ գործածութեամբ, գարձուածների, ոճերի ճարտասանական պատկերականութեամբ։ Համակում է մեզ իւր

զգացմունքով, իւր խոհերով, իւր մտածողութեամբ, բայց այդ համակումը կատարեալ չէ, բոլորամասն, լիովին չէ: Ընթերցողը, ունկնդիրը համակուելով, նոյն ժամանակ զգում է և մի պակաս, մի թերի կողմ, որ արգելում է նորան բոլորովին անձնատուր լինելու ողբերգութեան տպաւորութեան: Այդ այն կեղծ-դասականութեան տարրն է, որին Խորէնը հատուցել է իւր պայտքը, որից նա չի կարողացել ազատ մնալ և այդ բուն ժողովրդական, բուն ամբոխի համար գրուած երկում:

Կեղծ-դասականութիւնը Խորէնի ողբերգութեան մէջ արտայատում է գործող անձանց ընտրութեամբ և լեզուով: Անրշակ-ի մէջ բոլոր գործող անձինք թագաւորներ, իշխաններ և մեծամեծներ են, կարծես հայերը ժողովուրդ, ամբոխ չեն ունեցել, կամ Հայաստանում միայն իշխաններ են բնակուելիս եղել, իսկ լեզուն կամ, լաւ է ասել, լեզուի ոճը բարձր կամ փեմ կոչուածն է: Թէև, ինչպէս ասացինք, ողբերգութիւնը գրուած է աշխարհաբառ լեզուով և գործ է ածուած Տաճկահայոց ժամանակի գրական բարբառը, կամ, ինչպէս հեղինակն իւր յառաջաբանում ասում է, Պօլսի լեզուն, բայց նա այնքան խառնուած է գրաբառի հետ, այնքան խճողուած է գրաբառ ոճերով, բառերով ու գարձուածներով, գրաբառի հոլովները, խոնարհմունքը և նախդիրներն ալնքան առատութեամբ են գործ գրուած նորա մէջ, որ մի տարօրինակ խառնուրդ է գուրս եկել, որ շատ և շատ ծանրացրել է գրուածքը և, կարելի է ասել, միանգամայն անհասկանալի է գարձրել նորան հասարակ ընթերցողների ըմբռնողութեան համար:

Խորէնի ողբերգութիւնն եթէ շատ տեղ բանաստեղծական չէ, եթէ յաճախ նորա մէջ ախն ու ոխը. հառաջանքն ու ձայնարկութիւնները բունում են ջերմ զգացմունքի ու սրտի իսկական բիուածքի տեղ, ալնուամենայնիւ նա իւր ամբողջութեամբ զուրկ չէ մի յալտնի աստիճանի բանաստեղծական զանգուածից ու զգացմունքի տաքութիւնից: Արժանի է ուշադրութեան այդ գէպքում նամանաւանդ չորբորդ արարուածը, որի մէջ մի քանի կտոր եթէ ոչ բոլորովին բանաստեղծական են,

գոնէ, համեմատաբար ազատ են սովորական փքուած-ուռածութիւնից, սովորական արուեստականութիւնից: Առնենք, օրինակի համար, այդ արարուածի երրորդ տեսարանի հետևեալ կտորները, որ հեղինակը դրել է Արշակի բերանը.

Դրաստամատ.

Բայց կարեոր խորհուրդ մի, տէր...

Արշակ.

Կարենը...

Զի՞նչ կարեոր քան ցտնկալին բընութիւն,
Քան ըզպալծառ ալս կենսատուր արեգակ...
Քան զայս անբաւ երկնից կամար կապուտակ...
Քան զանպարոյր ալս և ազատ հորիզոն...
Քան վեր ու վար ալս ծիծաղուն բըլուրներ...
Քան բարձրածալը սաղարթախիտ ալս ծառեր...
Քան հեղաճեմ բիւրաղափալլ այդ ջըրեր...
Քան զայդ թըռչնոց ուրախաձայն ճըռուողել...
Քան սուրբ զայս օդ... քան լուսախառն հովանիս...

Դրաստամատ.

Բայց, տէր ալ քայլ...

Արշակ.

Հինգ տարի է, հինգ տարի
Որ ալս աչերս իբրև ըզկոլը մի թըշուառ,
Կարօտ, կարօտ են արեսուն նշուլից.
Հինգ տարի է ալս մաքուր օդ չեմ ծծեր,
Ու սիրտ իմ չէ ընդարձակեր լերկնից տես...
Հինգ տարի է թըռչնոց մի ձայն չեմ լրսեր,
Ոչ զեփիւռին տերեւաշարժ խըշըլտոց,
Ոչ առուակի մի կարկաջիլ հեշտալուր...
Շըղթալիշ ձայն, միայն ահեղ շըղթալի
Խառն ընդ ողբոց և յուսահատ արտասուաց
Ականջներս թընդացուցեր են հինգ տարի,
Ու հինգ տարի բիբս ՚իխտւար է բացուեր:

Դրաստամատ.

Կաղաշեմ, Տէր...

Արշակ.

Նայէ, նայէ լայդ արծիւ,
Ինչպէս ազատ բացած թևեր ճախրասլաց
Անհուն երկնից մէջ երջանիկ խորանալ...
Ալդ իմ հոգին է ազատ լիւր կապանաց.
Սլանալ վակժոյժ լիմ ցանկալին հայաստան...
Արծիւ, բարեւ մի տուր հալոց լեռներուն,
Ասա, Արշակն եմ ես, պըսակըն նոցա.
Թող վերցնեն ըզտիրութեան մըռալլ քօղ.
Հալոց պըսակն և արեգակ կըդառնալ...
Տնւր աւետիս, գոչէ Մասիս, ձորք խալտան,
Արշակ ազատ է, թագաւոր է Արշակ...

«Արշակ» ողբերգութիւնն իւր գուրս գալու օրից
մինչև ցայսօր միշտ աւելի է ներկալացուել, քան թէ
մեր միւս բազմաթիւ ժամանակակից ողբերգութիւննե-
րը—Թերզեանցի, Հէքիմեանի, Բէշիկթաշլեանի, Դու-
րեանի և միւսներինք: Դորա պատճառը պէտք է որո-
նել այն հանգամանքի մէջ, որ նա աւելի դուրեկան է,
աւելի գեղեցիկ է, մի խօսքով նա աւելի բեմական է,
քան թէ միւսները: Մի բան, որ մի առանձին գեղեց-
կութիւնն է տալիս նորա գործողութիւններին,— ալդ
այն է, որ Խորէնն իւր ողբերգութեան մէջ զետեղել
է երեք երգ, որոնց թէ բառերը և թէ երաժշտութիւնն
ինքն է հեղինակել, երբ առաջին անգամ ալդ ողբեր-
գութիւնը ներկալացը են Խալիբեան գալրոցում աշա-
կերտներն իւր իսկ հեղինակի հսկողութեամբ: Ցալտնի
է, որ Խորէնը լաւ երաժիշտ է եղել և իւր երգերից
մի քանիսի նուագն ինքն է յօրինել. նա նուագում է
եղել դաշնամուրի վերայ: Պատճում են, որ երբ երջան-
կալիշատակ Գէորգ ՚Ի. կաթուղիկոսը Պետերըուրդ գնա-
լիս ժամանել է Մոսկուա, և իջևանել է լալտնի Անա-
նեանի տանը, մի օր հանդիսաւոր ճաշկերոյթ է եղել
ալդտեղ ի պատիւ վեհափառին: Ահա ալդ ժամանակ
հանդիսականները շատ խնդրել են Խորէնին, որ, ինչ-
պէս ասել ենք, ուղեկցելիս է եղել կաթուղիկոսին նո-
րա ճանապարհորդութեան ժամանակ, որ նա մի բան
նուագէ, բայց նա հրաժարուել է, պատճառ բերելով

վեհափառի ներկալութիւնը։ Հանդիսականները խնդրել են վեհափառից թուլառութիւն և նա զիջել է, հրամատելով Խորէնին այդ անգամ բացառութիւն անել և կատարել հանդիսականների ցանկութիւնը Խորէնը նուագել է և իւր նուագածութեան նրբութեամբ զարմացրել է շատերին, որոնց մէջ և լաւ երաժիշտներ են եղել՝¹⁹⁾։

¹⁹⁾ Երջանկայիշատակ Գէորդ դ. կաթուղիկոսի Մոսկուա գալու, Անանեանի տանն իջևանելու և առչասարակ մոսկուարանակ հայերի կողմից նորան ցցց տուած կամ արած ընդունելութեան մասին արժէ կարդալ հանդուցեալ Ս. Նազարեանցի մի նամակը, որ նա 1867 թուի հոկտեմբերի 12-ին գրել է իւր նոր նախօնքանդի բարեկամ Գրիգոր Սալտիկեանին։

Աւելորդ չենք համարում բաղուածօրէն մէջ բերել այս տեղ այդ նամակից կաթուղիկոսին վերաբերեալ տողերը։

«Լաթողիկոսի ընդունելութիւնը ձեր բաղարքին մեծ արծաթ նստեցաւ, և մեր մոսկուարանակ հայերիս Մոսկուայում ոչ փոքր այսինքն 1000 ման. բայց ընդունելութիւնը շատ հյանակապ, զրեթէ կայսերական էր. բոլոր մասնակիցքը անխտիր, հարուստ և միջակ 25 մանէթ. և բառասուն մարդէ աւելի էր հացկերութեան բազմո. թիւնը, որովհետեւ հիւրեր ևս ունէինք. ճառեր ասուեցան, կաթողիկոսի կենաց բաժակի վերայ. Եւ ես որոտացի, ի հարկէ ամեններից առաջ իրրև հասարակութեան պատգամաւոր. Այս բոլորը մի կողմից եղաւ ի հարկէ մեր աղբային անձը յարգելու, մեր ամօթոյքը ծածկելու օտար ոռուազգի հասարակութեան արջե. բայց թէ կաթողիկոսը որքան արժանաւոր էր մեր պատուին, այդ պիտոյ չէ ըննութեան տակ ձգել. այդ մասին բոլոր խելացիների և հասկացողների կարծիքը. մի տեսակ է այնպէս, ինչպէս դու դրած ես. Եւ մի տգէտ աղջի ընտրածը ինչ պիտի լինի. որպէս ընտրողը, նոյնպէս և նորա ընտրածը Եւ այստեղ անտեղի է մեր գանգատանքը. Սի անօրինակ անպատշաճ բան պատմեմ ձեղ. կաթողիկոսը զինի մեր հաց ու աղով մեծածափ մեծարանքին, հրաւիրած իւր մօտ բաղաքապետը, բաղաքական գուրեռնատոր և օրեր պօլիցէյ-մէստրը, բայց մեր հասարակութենէն ոչ մի անձն, ոչ ուսումնական, ոչ վաճառական, ոչ աղնուական և ոչ բահանայ. Ինչպէս հաւանես այսպիսի ընթացքի. ասես թէ հայոց կաթողիկոսը մի

Մենք կարծում ենք, որ մլրշակ Բ.՝ ողբերգութիւնը կարող է տպաւորութիւն թողնել հանդիսականների վերալ և յաւանի չափով հասնել այն նպատակին, որ գրել է իրան Խորէն վարդապետը, եթէ միայն նաներկայացուի իւր ամբողջութեամբ, սակաւ յապաւումներով ու փոփոխութիւններով միալն ծաւն այն է, որ հայկական բեմը դորան երբէք չի ներկայացրել այնպէս, ինչպէս որ նա դուրս է եկել հեղինակի գրչի տակից. բեմական արուեստին անհմուտ ձեռքեր միշտ, համարեամսեն ներկայացման ժամանակ այնպէս են նորան անդամահատել, փոփոխել, որ բեմի վերալ մնացել է միալն ողբերգութեան խեշերանքը, անկատ տեսարանները, որոնք, ի հարկէ, չէին կարող այն տպաւորութիւնները

Խորհուրդ ունէր առանց հայոց հասարակութեանը. Կաթողիկոսը իւր մարդերով իջևանած էր Յոնանովի տանը և մաց Մոսկուայում երկու շարաթ բոլոր ծախքերը Յոնանովի քսակից. Կաթողիկոսի տօնին, որ անցեալ ամսի 30-ին էր, բաւական փառաւոր նախաձաշիկ ունէր նա առ ի շնորհակալութիւն եկած հասարակութեան համար. Եւ ես մասնակից էի դորան.

Ամսոյս 3-ին ճանապարհ ճգեցինք կաթողիկոսին դէպի Պետերբուրգ նոյնպէս մեծ հանդիսով. նա օրհնեց մեզ և մենք նորան: Այսքան միայն կարող եմ ասել բարեսիրտ մարդ է, բայց ուսմանէ ամենեմն լուրի և հայեացը աշխարհիս վերայ ամննեին արեղայական և խաւար. Բայց պահանջել ևս կարելի չէ. Հնձել այնտեղ, ուր ոչ ոք սերմանած չէ, անբնական է. և մի լուսաւոր կաթողիկոս կարող չէ ոչ սունկի պէս ինքն ըստ ինքեան բուսանել երկրից, և ոչ իսկ Աստուած պարկի մեջ դրած ուղարկել մեզ երկնքից. մի այդպիսի մարդ պիտի ազգի ձեռամբ պատրաստուի. բայց ո՛ւր է ազգը. Աչա քեզ մեր ցաւերի աղբիւրը, կարճ խօսքով. Զայն կայ, որպէս թէ կաթողիկոսը ամսուս վերջում կը վերադառնայ Պետերբուրգէն դէպի Մոսկուա և ցամաքով ճանապարհ կելանէ դէպի Կովկաս. Թէ Հայերը կամ թէ կայսրը և նախարարքը ինչպէս ընդունած են նորան և նա ինչ իրաւունքներ իրեւ կաթողիկոս պիտի ստանայ, այդ մասին. մինչև այս բոպէն ոչինչ տեղեկութիւն չունիմ իմ բարեկամներիցս. ամենայն բերան և գրիչ փակ են որպէս գերեզման:

թողնել հանդիսականների վերալ, որ կարող էր անել ողբերգութեան ամբողջութիւնը։ Մենք, ի հարկէ, դէմ չենք, որ ներկայացուելիք պիեսների մէջ փոփոխութիւններ կամ յապատռմներ արուեն. ամենաընտիր թատերական գրուածների մէջ իսկ նոցա ներկայացնելու ժամանակ անում են այնպիսի փոփոխութիւններ ու յապատռմներ, որոնք այս կամ այն պատճառով անյարմար են համարում տեղին ու հանգամանքին, բայց կարծում ենք, որ այդ փոփոխութիւններն անողները պէտք է լինեն թատերական գրուածներին ու բեմական արուեստին շատ հմուտ մարդիկ, որպէս զի չը վնասուի երկի էական մասը, չխանգարուի նորա ամբողջութիւնը, չաղաւաղուի նորա իմաստը, որ, ի հարկէ, մեղանում ի նկատի չի առնելում։

«Արշակը» հայկական բեմի վերալ միշտ համարեան ներկայացում է երեք գործողութեամբ։ Հինգ արարուածից երկուսը մեծաւ մասամբ յապատռմ դուրս են ձգւում, փոքր մասն էլ միացւում է երրորդ արարուածի հետ, որից առաջ է գալիս արարուածների տեսողութեան մէջ անհամաշափութիւն, տեսարանների մէջ միատեսակութիւն, գործողութիւնների մէջ անհետեականութիւն և թութիւն։ Աւելի ևս ցաւալի է այն հանգամանքը, որ մեր թատերական գործի խեղճութեան պատճառով երբէք չի պատահել, որ «Արշակը» ներկայացնեն, ըստ կարելւոյն, իւր բոլոր պատմական սարք ու կարգով՝ զգեստներով, զէնքերով։ Բեմական արդ ու զարգով և առհասարակ ժամանակի հոգուն ու հանգամանքներին վայել հաւատարմութեամբ ու ճշութեամբ, չենք խօսում արդէն այն բանի մասին, որ մեր մէջ երբէք չի պատահել, որ այդ ողբերգութեան դերերը բաժանուեն, տրուեն իսկական արտիստ դերասանների։ Փոքր մասով խնամք ալդ կողմից միայն տարուել է Արշակի դերի վերալ, որ խաղացել են շատ թէ քիչ աշքի ընկնող դերասաններ։ իսկ միւս դերերը միշտ համարեան կատարել են նորեկներ, սիրողներ, դերասանական արուեստին անվարժ, անհմուտ մարդիկ, որոնք իւրեանց անհմտութեամբ, շարժուածքի անբնականութեամբ ողբերգութեան ամենալաւ տե-

զերն անգամ վէտացրել են, ամենաողբերգական տեսարանների մէջ անգամ շարժել են հանդիսականների ծիծաղը և ողբերգութիւնը կատակերգութեան փոխել:

Յայտնի է, որ մի որևիցէ թատերական գրուածքից ստանալիք տպաւորութեան չափն ու որակը կախուած է լինում ոչ միայն իւր գրուածքի գրական ու թատերական արժանաւորութիւնից: ալլ և նորա ամբողջութիւնից, ալաինքն և՝ գրական արժանաւորութիւնից, և՛ բեմական սարք ու կարգից և գրուածքը ներկայացնող կամ պատկերացնող անսամբլից: Հայոց ողբերգութիւնն երն այդ կողմից շատ աննպաստ հանգամանքի մէջ են եղել և են, որովհետեւ նոց պակասում է վերջին երկու պայմանը և մնում է միայն գրուածքի գրական և թատերական արժանիքը, որից ստացուած տպաւորութեան չափով և որոշուում է նորա առաւելութիւնն ու պակասութիւնը:

ԴԼՈՒԽ Զ.

Խորէնի «Ալաֆրանկան» մի հինգ արարուածով կատակերգութիւն է, առնուած Պօլսի Հայոց կեանքից: Ալդպիսի խորագրով կատակերգութիւն գրելու միտքը հանգուցեալը լղացել էր տռաջին անգամ 1861 թուի երկրորդ կիսում, երբ առիթ էր ունեցել թէոդոսիալից: Պօլիս գնալու և իւր հայրենի քաղաքում մի քանի ամիս մնալու: Ալդ միջոցում նա ականատես էր եղել Պօլսի Հայոց բարձր և հարուստ դաստկարգի անօրինակ նիստ ու կացին—կոյր զկուրայն, առանց չարն ու բարին ճանաչելու, Եւրոպացւոց հետեւելու վատ սովորութեան, և գուշակել էր դորա վատ հետեւանքն ազգալին վարք ու բարքի և առանձնայատկութիւնների վերաբերմամբ: Նա զինուել էր դորա դէմ այն ժամանակ, ըստ կարելոյն, ամեն տեղ խօսելով դորա դէմ, հասկացնելով դորանից առաջ գալիք վնասը և մինչեւ իոկ եկեղեցու բեմից քարոզներ էր խօսել այդ առթիւս: «Մենք, ասում է նա ալդ մասին իւր կատակերգութեան յառաջաբանում, որ անցեալ տարւոյն երկրորդ կէսը մեր բնիկ հայրենակցաց, ալաինքն Պօլսոյ մէջ:

անցնելու բաղդն ունեցանք, աւելի ի մօտով տեսնելով ու նկատելով այս օտարասիրութեան մեր մէջ ըրած ազետալից ջարդը, մեզի պարտք համարեցանք նոյն սըրբազն բեմէն զինուիլ այս ազդակործան ախտին դէմ, նկարագրել նորա հասուցած մեծամեծ վնասները, ու մեր ազգակից եղբայրները համոզել որ լետո կան անկէց երդուեցնելով զնոսա լԱնուն այնորիկ՝ որ զՆալը իբրև Հայ քրիստոնեալ պիտի պատկէ լաւիտենականութեան ամպերուն վըալէնա։ Սակայն այդ բոլորը նա բաւական չի համարել. ախտը շատ վնասակար է եղել և դորա հասցրած վնասներն անթիւ ու անհամար, ուստի և նա հարկաւոր է համարել դորա գէմ մաքառելու համար աւելի հատու սուր գործ ածել, մի կծու կատակերգութեան մէջ ծաղրել, խալտառակել Հայերիս կեանքում առաջ եկած ալդ վնասակար, այդ անբնական երեսլիթը, որովհետեւ լաւ է հասկացել, որ լաճախ ծիծաղն ու ծաղրն աւելի մեծ դեր են կատարում, քան թէ քարոզներն ու լուրջ քըն նադատութիւնը։

«Ալաֆրանկան» իբրև կատակերգական գրուածք մի առանձին արժանիք չունի. նորա մէջ դուրս բերուած տիպարները թոյլ և անգոյն գծերով են քաշուած, այնպէս որ, կարելի է ասել, նորա մէջ իսկական տիպարներ չկան, այլ անգոյն, անդէմք գործող անձինք, որոնք մտնում, դուրս են գալիս, խօսում, ծիծաղում, բարկանում են, բայց բեմից դուրս գալուն պէս մոռացւում են, անհետանում են մարդու մտքից ու երեակալութիւնից։ Դոքա իսկապէս տիպարներ էլ չեն, այլ տիպարների սիլուետներ։ Ալաֆրանկալի մէջ այն կծու ծաղրը, այն արտասուախառն ծիծաղը չկայ, որ մի անգամ կեանքի մի որևէ չար, վնասակար երեսլիթ, ի նկատի առնելով, այնպիսի կնիք է դնում նորա վերայ, որ այլ ևս քերել, հանել նորա վերալից չի կարելի, որ մի անգամ մարդ տեսնելով, լսելով ու կարգալով, այլ ևս չի մոռանում, մի հանգամանք, որ լատուկ է միայն գուտ դասական կատակերգութեան։ Ալաֆրանկան բեմականութիւն էլ չունի. կարճ տեսիլներն անդադար լաջորդում են միմեանց. աւելի շուտ ոչ թէ լուրջ կա-

տակերգութեան, ալլ իբրև ֆարսի, զաւէշտի տպաւո-
րութիւն թողնելով հանդիսականների վերալ։ Գործողու-
թիւնների անբնական կերպով միմեանց հետ կապակ-
ցուելը և գրուածքի նիւթը կազմող ֆարուլալի զինծու
լինելը, գիտաւորեալ կերպով սարքուած լինելն ամեն
ըոսկէ ընթերցողի աչքին է ընկնում և, որ գլխաւորն է,
նորա յարօւցած ծիծաղը գործողութիւնների ներքին
բօվանդակութեան ծիծաղելի կերպով սարքուելուց առաջ
չի գալիս, ալլ արտաքին, պատահական հանգամանքնե-
րից, սխալ շարժմունքներից, խօսակցութեան ձևից,
գործածած գաւառաբարբառով յատկութիւնից և այլն,
որ և յատուկ է միայն թատերական գրուածների այն
տեսակներին, որոնք գրուած են ոչ թէ մի որևէ հա-
սարակական կեանքի վնասակար ախտը ծաղրելու, ոչն-
չացնելու նպատակով, ալլ միայն ընթերցողներին և
ունկնդիրներին պարզ, անմեղ, անհոգ զուարճութիւն
պատճառելու դիտաւորութեամբ։

Բայց Խորէնի կատակերգութիւնն ունի երկու կա-
րևոր կողմ, որով նա արժանի է լինում մեր համակ-
րութեան և բռնում է մեր կատակերգութիւնների մէջ
իւր արժանաւոր, որոշ տեղը։ Ալդ նորա բովանդակու-
թեան այն հետաքրքրական մանրամասնութիւնն ու արն
համակրելի գաղափարն է, որ հեղինակը ցոլացնում է
իւր երկի մէջ։ Ալաբրանկան, կարելի է ասել, միակ
մեծ և փոքր ի շատէ լուրջ կատակերգութիւն է, որ
առնուած է Պօլսահայոց մեզ համար ամեն կողմից շատ
հետաքրքրական կեանքից։ Մենք ունենք թատերական
գրուածներ Թիֆլիսի Հալոց կեանքից, ընդհանուր Ռու-
սահայոց կեանքից և մինչև անդամ ալնպիսի գաւառա-
կան քաղաքների կեանքից, ինչպիսին են Երևանը, Ա-
լեքսանդրապոլը և միւսները, որոնք շատ թէ քիչ մա-
սով նկարագրում, պատկերացնում են մեզ մեր զանա-
զան հայաբնակ տեղերի հայկական կեանքի երևոյթնե-
րը, ներկայացնում են մեզ մեր ներքին ընտանեկան
կեանքն իւր սրտամաշ ցաւերով, ախտերով, մեր վիշտն
ու ուրախութիւնը, մեր վատ ու լաւ կողմերը, բայց
չունենք Պօլսի բազմամբոխ հալութեան ներքին կեան-

քի նկարագիրը գէթ մի որևէցէ աչքի ընկնող թատերական գրուածքի մէջ:

Բնիկ Պօլսեցի հալ, ի հարկէ, չկալ. պօլսաբնակ Հայերը բոլորեքեան ևս գաղթականներ են մալր-երկրից: Տարբերութիւնը միայն նորա մէջ է, որ ոմանք առաջ են գաղթել, ոմանք լետոյ, ոմանք եկել են երկրորդ կամ երրորդ գաղթականութեան տեղերից, ոմանք էլ անմիջապէս բուն երկրից: Եւ այսպէս ահա Տաճկաց մալրաքաղաքում կազմուել է հալ տարրի երեք տեսակ համայնք, որոնք բնորոշ գծերով զանազանուում են միմեանցից: Հին գաղթականներն արդէն ալնքան ընտելացել են օտար հողին ու զրին, հալրենիքից և իւրեանց հալրերի ծննդավալրից դուրս ապրելու հանգամանքներին, որ մոռացել են իւրեանց գաղթականութեան հանգամանքները, նոյն իսկ գաղթական լինելը և սկսել են իրանց բնիկ Պօլսեցի համարել: Հներից ժամանակով լետոյ եկած գաղթականները թէև գարձեալ բոլորովին ընտելացել են օտարութեան և ընդունել հների վարք ու բարքի հետ և նոցա ապրելու եղանակը, կեանքի տարազը, այնուամենայնիւ նոքա դեռ իսպառ կտրուած չեն իւրեանց հալրենիքից. նոցա հեռաւոր ազգական-ները դեռ ապրում են ծովի այն կողմը, այն հեռաւոր Անատոլում և կամ վիլայէթում. նոքա դեռ լիշում են իւրեանց հալրերի գերեզմանները, իւրեանց նուիրական տեղերը՝ եկեղեցիները, վանքերը և ուխտատեղիները: Նոցա լեզուի մէջ դեռ լսուում է մալրենի գաւառաբարբառը, նոցա սովորութիւնների մէջ դեռ պահպանուել է հալրենի համն ու հոտը, մի խօսքով հալրենիքի լիշողութիւնը թէև արդէն կորցրել է նոցա համար իւր տաքութիւնը. իւր ախն ու վախը, բայց և այնպէս նա դեռ իսպառ չի ջնջուել, չի կորել և չի անհետացել նոցա մտքից ու երևակալութիւնից: Դոքա «դրսեցիներն» են, որոնց վերալ «ներսեցիները» եթէ ոչ թըշնամութեամբ, գոնէ, միշտ խտրութիւն անելով են նարում, միշտ լիշում նոցա գրսեցի լինելը և ընկած տեղը բանի տեղ չգնում, արհամարհում: Երբորդ համայնքը բաղկարած է նոր գաղթականներից, որոնց շատերի ընտանիքն էլ դեռ հալրենիքումն է և որոնց մեծ մասն

եկել է մայրաքաղաք ոչ մշտապէս այդտեղ ապրելու, ալ միայն բաղդ որոնելու և ժամանակով նորից վերագառնալու հայրենիք կամ ինչպէս այժմ սովորութիւն է եղել ասել, «երկիրը», թէև այն էլ պէտք է ասել, որ այդ ժամանակաւոր դրութիւնը շատերի համար դառնում է մշտական և հետզհետէ տեղական մի բան։ Դոքա էլ «խաբա» հայերն են, որոնց մեծամասնութիւնը կազմում են Հայաստանի մշակները, բեռնակիրները, բանուորները, որոնց, ինչպէս և բոլոր գաւառացի հայերին, ներսեցիները կոչում են «խմբներ»։

Այսֆրանկակի բովանդակութեան ատաղձն առնուած է Պօլսարնակ հայերի երրորդ տեսակի կամ համայնքի այն ընտանիքների կեանքից, որոնք մշտական բնակութիւն են հաստատել մայրաքաղաքում։ Նորա մէջ գուրս էր բերուած երկու Սաղըր-օղլու ազգանունով եղբոր ընտանիք, որոնցից մէկի անդամները ներկայացրած են իբրև դրական տիպարներ, միւսինը իբրև բացասական։ Առաջին, այսինքն դրական տիպարներ ներկայացնող ընտանիքը, որի գլուխն է Մարգար աղան, ապրում է իւր կնոջ, որդու և աղջկալ հետ՝ Պօլսի բազմահայ, բայց գուեհիկ Սամաթիա թաղում։ Նա պահել է իւր բոլոր գաւառալին առանձնայատկութիւնները — լեզուն, սովորութիւնները, — պարապմունքը, կեանքի տարագը, հագնուել — կապուելու ձեւը, մտածմունքը, աշխարհահայեացքը, պարապմունքը և կեանքի այն բարոյական մաքրութիւնն ու նահապետական պարզութիւնը, որ յատուկ է հայաստանցիներին։ Այդ ընտանիքի անդամները, սկսած ընտանիքի հայր Մարգարից և վերջացրած նորա դստեր փեսացու Եաղճը-օղլու Գասպարով, բոլորեքնան էլ աշալուրջ, աշխատասէր, բարեպաշտ և խելքը գլխին մարդիկ են։ Մարգար աղան պարապում է ոսկերչութեամբ, հագնում է «եաղը ֆէս, մաշած սէթրի», եամալը խսւնտուուաներ և իւր վերին աստիճանի խնայողութեամբ ու խելացի տնտեսութեամբ կարողանում է անկարօտ պահել իւր ընտանիքը։ Գասպար փեսացուն մի աշխատասէր, երկրագործութիւնը մասնագիտօրէն Պարիզում ուսած երիտասարդ է, որ աշխատում է Սան — ստեֆանօլի ու Մաքրի գիւղի մէջ գտնուած և Մուհասէպէ-

Ճի Ալի փաշալին պատկանած մեծ գիֆթիկը վարձել ու մշակել. Մարդարի գուստը Զամբէթան մի համեստ, աշխատասէր և խոնարհ հայ աղջիկ է, որ կապում է «եւաշմախ» հագնում է «փէրաճէ» և պարահանդէսներ ու պարերեկոլթներ յաճախելու փոխարէն իւր մօր ձեռքի տակ սովորում է տնարարութիւն, ընտելանում է յաւ տուն պահելու տանտիկնութեան արհեստին. որդին Սեթրակը մի այնպիսի ժիր, աչքաբաց հայ տղալ է, որ աւարտել է հայ դպրոցի դասընթացքը, յաւ խօսում է հայերէն, բոլոր շարականները «գոց» գիտէ, սովորել է ճարտասանութիւն, ֆրանսերէն, յունարէն, անգլիերէն, տաճկերէն, թուաբանութիւն, երկրաշտփութիւն, հանրահաշմախ և եռանկիւնաչափութիւն. նա խոնարհ է, մեծերի պատիւը ճանաչում է, հօր արհեստը չի արհամարհում և աշխատում է յաւ մարդ դառնալ, հօրն ու մօրը միխթարանք լինել և ազգին անարդանք չըերել. նա միտքն է դրել Հասկէօլի դպրոցը մանել և բժշկականութիւն սովորել և ծնողներին պահել: Սեթրակն արտաքին փալլ չունի, նորա ձևերը, խօսելու եղանակը կոկուած, լղկուած չեն. նա շատ անգամ փոխանակ բացասական պատասխան տալու, գլուխն է միայն շարժում, իւսելու ժամանակ էլ խօսակցի աչքի մէջն է նայում, որովհետեւ նորա ևպատուելին»—ուսուցիչը սովորեցրել էր նորան. «Պատուալոր անձի մը հետ խօսելու ժամանակ անոր երեսը նալել .չորս դին նայելը կոպտութիւն է, վար գետին նալելը կեղծաւորութեան նըշան է»: Երկրորդ, բացասական տիպարներ ներկայացնող ընտանիքը, որի գլուխը Մարդարի աւագ եղբայր Դաւիթ աղան է, առաջնի հակապատկերն է ամեն բանում: Դա, այդ ընտանիքը, որ բաղկացած է հօրից, որդուց, աղջկանից և ծերունի քեռուց, ապրում է Պօլսի արիստոկրատ Պէլ-օղու թաղում և ձեռքից եկած ամեն միջոցներով աշխատում է հեռանալ հայկական նիստ ու կացից և ամեն բանում հետեւ Եւրոպացոց: Հայրը, Դաւիթ աղան, որի հանգուցեալ կինը բերել է իբրև հարսնութեան օժիտ իւր մարդուն մեծ կարողութիւն, փոխել է իւր Սաղըր-օղլու ազգանունը Խաչառունի. նա իւր տունը շինել ու սարքել է երոպական ճաշակով ու ձեռվ.

բազմաթիւ ծառաներ է վարձել. նա ուտում, խմում է և ըսպացւոց պէս, հանգում և հաղցնում է իւր զաւակներին եւրոպական տարազով, դաստիարակում է նոցա, իւր զաւակներին Եւրոպացի վարժապետների. գլխաւորապէս Փրանսիացիների ձեռքով և առհասարակ նա իւր արտաքին ու ներքին կենցաղավարութեամբ այն աստիճան ճիգ է թափում նմանել Եւրոպացոց, որ եթէ հնարաւոր լնի, մինչև իսկ օտարները չ'ճանաչեն էլ, թէ նա հայ է, ալ բնիկ Եւրոպացի: Դաւիթ աղան մինչև անգամ ամբողջ տարով էլ չի տեսնւում իւր եղբօր և նորա ընտանիքի հետ, որովհետև ամաչում է նորա «իսպալյութիւնից». իսկ երբ որ եղբայրը և նորա որդին մի անգամ, ամբողջ տարին շտեսնուելուց լետոյ, այցելում են նորան մի կարևոր գործի համար, նորան ալդ այնքան դուր չի գալիս, որ վերին աստիճանի սառն ընդունելութիւն է անում նոցա և ալդտեղ հէնց տեղն ու տեղը նոցա երեսովն է տարիս նոցա հայկական կոպտութիւնը, նոցա «խապալյութիւնը»:

Դաւիթ աղայի որդին, որի Յարութիւն հայ Խապաւանունը Սահառունին փոխել է Պասքալ, և դուստր Մառգրութը վեց տարի է ինչ դաստիարակւում ու կրթւում են Եւրոպացի վարժապետների ձեռքի տակ, բայց բացի Փրանսիերէն կոտրատելուց՝ պարելուց, լաւ հագնուելուց, ծումռուելուց, պարահանդէսներ ու երեկոյթներ լաճախելուց, դաշնակի վերալ զընդզընդացնելուց, ոչ մի ուրիշ օգտաւէտ գիտութիւն ձեռք չեն բերել: Պասքալը մի ինքնասէր արարած է, անընդունակ մի որ և է մտաւոր և ֆիզիքական աշխատանքի, իսկ Մառգրութը մի զարդարուած և բարոյտպէս արդէն փճացուած պաճուճապատանք, որ Զամբէթալի պէս համարեաթէ չի էլ երեւում բեմի վերալ, ալ միտևն նորա ինչ լինելը հասկացւում է այս կամ այն գործող անձի պատմուածքից²⁰):

²⁰⁾. Մառգրութի ինչ տեսակ աղջիկ նեղածն իմացւում է գլխաւորապէս նորա մի նամակից, որ նա գրում է իւր հօրը Միւսիւ Տիւվալ Փրանսիացու տանից, ուր հայրն ուզարկել էր նորան մի քանի ժամանակով «ալաֆրանկայութեան» վարժուե-

Բացասական տիպարների հետ միասին այդ ընտանիքում ապրում է և մի դրական տիպար. դա վերոլի.

Հու նպատակով. Հետաքրքրական է այդ նամակը, որովհետեւ նորա մեջ արտայայտուած մտքերը և նկարազրուած ժամանակ անցկացնելու եղանակը մինչև ցայսօր էլ գեռ հնացած չեն մեզ համար և մեր արդի բարձր դասակարգի նագելի տիկինների և օրիորդների սովորական աշխարհահայեցքի, ապրելու եղանակի, հագնուելու ու կապուելու տարավի ճիշտ պատճենն են մի փոքր զանազանութեամբ միայն, որ Մասգոիթն եւր հօրը գըրում է թէ և աղջատ, բայց և այնպէս մայրենի լեզուով, իսկ մեր այժմուայ նազանիները գրում և խօսում են միայն և միայն օտար լեզուով. Fisi-done! ինչպէս կարող է հայ կոպիտ լեզուն արտայայտել նոցա նուրբ զգացմունքները...

Եթո հոս առողջ եմ, աղեկ ըոինս եյլէնմիշ կըլլամ կոր Միւսիւ Տիւվալին տունը. բոլոր օրը կխաղանք, կցատկինք, կըպտաբինք. մեկ խօսքով՝ ամէն թիւրլիւ շէնլիք կընենք կոր. գիշերներն ալ դուրս կելլանք ու փիազային վրայ ժուռ կուգանք յուսնկայի լրսով. ես ալ հոռմի հավաներ, տաճկի թիւրքիներ կերգեմ, կամ սորված ֆրանզի ոսմաններս, կամ թալիսնի օփերայի կտորները կերգեմ կոր, ինչուան կէս զիշերէն երկու երեք սահաթ ետքը. Ամենքը ինձի հաւանին ու մէկ բերան իս կզավին կոր Ամէն օր, ամէն տեղաց էնվիթասիօններ կուգան կոր ինձի ֆրանսը բավալիէռները կըսեն կոր քի դուռ Արմենիէն չիս, ֆրանսէկ մատուազէլ մըն ես. իս ֆրանսէկի տեղ կդնեն կոր. իմ մանիեռներս պիւթիւնն ալ անշանմէ կնեն կոր. Ես ալ պէտք եղած տեղը բափրիս կընեմ, պէտք եղած տեղն ալ տէզիօ տու կընեմ քի պիւթիւն բավալիէռներն իրար կանցնին, չեն զիտեր ինչ օմած ընեն ինձի. Անուշ անուշ խօսքեր ու պիյեէներ շատ, ո՞ր մէկը գրեմ, աղապա, ո՞ր մէկը պատմեմ: Մոսկովի էլ չին, աս իրիկունս Սուարէ տանսանտ մը պիտի տայ իր հոս տեղի սարայը՝ պիւթիւն Պէյօիւք տէրէյի ու Պէյօլուի մեծերուն. Ինձի ալ օրերով առաջ հէմ բերնով աղչեց, հէմ տէ մախուս քարթ տէնվիթասին ալ դրկեց. լաիլաճ պիտի երթամ. մախուս տէքօլթէ ֆիսթան մը շինել տուի որ շատ վայլեց ինձի, նոր պըրասլէ և զիշեք բուրօն ալ առի. ինձէ պաշխա բանի մը Հայ քիպարի աղջիկներ ալ կան կարծեմ էնվիթէ եղած. ասոր համար շատ ուրախ եմ, զերէ անոնք պիւթիւնն ալ փատի կտորի պէս բաներ են. նէ՛ ինձի պէս ցատքելգիտեն, նէ՛ խաղալ, նէ՛ պէտք

շեալ ծերունի քեռի Պօղոս տղան է, հանգուցեալ տան-
տիկնոց եղբայրը, որի ձեռքով կատարւում է տան բո-
լոր ծախսը: Նա շատ է խրատում թէ Սահառունուն և
թէ նորա զաւակներին, որ նոքա ձեռք վեր առնեն ա-
ւելրոդ ծախքերից, հասկացնելով, որ իւր քրոջ օժիտն
արդէն վերջացել է և ծախսուում է վերջին հանգուցեալի
գոհարեղէնի վաճառումից ստացուած 10 հազար դու-
ռուշը, բայց նորան լսող չի լինում և մինչեւ իսկ նա,
որ համարձակում էր անդադար անհանգիստ անել նոցա
իւր տրտունջներով, իւր «ծերի տուտոցով» խայտառա-
կաբար վոնդուում է տանից: Եւ Սահառունու տան
կեանքը շարունակում է իւր սովորական եղանակով.
Փողը ջրի պէս գնում է, տաս հազար դուռուշը շատ
շուտով հալւում է... և պարտատէրերը սկսում են դու-
ռը կտրել:

Ի՞նչ պէտք է լինէր դորա վերջը, ուր պէտք է
հասնէր գորա ծալրը: Բնականապէս տունը պէտք է
քալքայուէր և նիւթականտպէս, ինչպէս որ նա արդէն
քալքայուել էր բարոյապէս: Սահառունին ամեն միջոց
գործ է դնում վասնգից ազատեյու համար իւր անձը,
իւր պատիւը, բայց «չինչ չի օգնում» նա դիմում է ի-
րան բարեկամ ձեւացող Յակորիկ էֆէնդիին, որ միշտ
նորա տանն ուտում, խմում էր և ամեն տեսակ շահ-
ում էր նորանից, բայց նա փոխանակ օգնելու նո-
րան, սկսում է նորանից պահանջել իւր 27⁰ դուռուշը
պարտքը, որ նա տարուել էր նորան՝ թղթախաղում։
Նա կամենում է Պասքալին հասքէօլի բժշկական դըպ-
րոցը տալ, որ նա կարողանալ իւր աշխատանքով թէ ի-
րան պահել և թէ տունը կառավարել, բայց նա Սեթ-
րակի հետ մրցողական քննութեան ենթարկուելով,
կտրւում է և դպրոցից դուրս մնում. նա աշխատում է
Մառզգութին ամուսնացել բժշկական դպրոցի դասա-

եղածին պէս փոլքա, նէ՛ վալս, նէ՛ քոնտրըտանս, նէ՛ ուտուշա,
նէ՛ մալուրքա, նէ՛ փոլքա մազուրքա, նէ՛ կալօփ, նէ՛ սքոթիլ,
նէ՛ քադրիլ. բոլոր գիտածնին լանսիէմ է քի բոլոր աշխարչ
պաթալ եղաւ, ասոնք իսէ տահա նոր սորվեր են, ան ալ հա-
մայի պէս կխաղան ու կխաղան։

տու տօքթու Արգար Պէլի հետ, բայց նա նորա կարողութեան «չորսին մէկն» օժիտ է պահանջում, որովհետեւ այն տեսակ պահուած ու դաստիարակուած աղջկան առանց մեծաքանակ օժիտ ստանալու պահելը դժուար է համարում իւր համար. նա մարդ է մէջ ձգում մեծամեծների մօտ, որ մի որ և է պաշտօն տան իրան, բայց ալդ էլ ապարդիւն է լինում և ամենքն երես են դարձնում նորանից:

Ինչ էր մնում անել նորան, եթէ ոչ միայն անձնասպանութիւն գործել և այդպիսով ազատուել այն անուանարկութիւնից և աշխարհի առաջ ծաղը ու ծանակ, խաղք ու խալտաւակ լինելուց, որ սպասում էր նորան, բայց ալդ ևս մասամբ իւր կամքի թուլութեան պատճառով, մասամբ էլ իւր մերձաւորների արթուն հըսկրդութեամբ չի կարողանում իրագործել: Հետաքրքրականն այն է, որ Մարգար աղայի և միւսների հետ միասին Պասքալն էլ աշխատում է հօր անձնասպանութեան առաջն առնել, նորա ձեռքերը բռնել, ատրճանակը ձեռքիցը խլել, բայց ալդ բոլորն անում է նա ոչ նորա համար, որ սիրում է նորան, այլ որովհետեւ այդ անախորժ բան կինի. և, որ գլխաւորն է, ալդ պատճառով նա կարող է զրկուել տեղի ունենալիք «Պալայի» մասնակցութիւնից, որի համար նա մի նոր «ապի» էր պատուիրել ու պատրաստել տուել Փրանսիացի գերձակ Միլմիդոնին և որ շատ վայելում էր նորան:

Ահա այսպէս սկսում, հետզհետէ առաջ է գնում, զարգանում և կապւում կատակերգութեան գործողութիւնը, որը լուծելու համար ուրիշ ճար չի գտնում հեղինակը, բացի նորանից, որ դիմում է սովորական «Թես թա տաշինա» ներից մէկին: Վիլայէթից գալիս, վրայ է հասնում Սաղըր-օղլու ընտանիքի ծերունի հալը Մաթոս աղան և Մարգարի ու Պողոսի հետ միասին վճարելով Սահառունու բոլոր պարտքերը, դուրս է անում Պասքալի խեղկատակ վարժապետներին, վանդում է տան մակաբոլծ Յակոբիկ էֆէնդիին և միւսներին, վարում է ձրիակեր խոհարար Մրտոլին. ծառալ կիրակոսին, Պատքալին էլ հագցնում է Վիլայէթի տարազով հալաւներ

և բոլորին հաւաքում, նորից գտղթում, գնում է «երկիրը»:

Ի՞նչ է ալդ բանը, ինչից առաջ եկաւ ալդ բոլորը: Ալաֆրանկան է ալդ, Ալաֆրանկայութիւնից առաջ եկաւ ալդ բոլորը: Ի՞նչ է, ուրեմն, Ալաֆրանկան, ալաֆրանկայութիւնը, որի գէմ զինւում է հեղինակն իւր կատակերգութեամբ: Ալաֆրանկան Տաճկահայոց պօլսա բնակ, զմիւռնաբնակ և առհասարակ Թիւրքիոյ ծովեղ-քեալ քաղաքներում ապրող հայերի Փրանկների, արսինքն եւրոպացւոց, գլխաւորապէս Փրանսիացւոց, որոնց ազդեցութիւնը նամանաւանդ զօրեղացել էր Տաճկաստանում Ղրիմի պատերազմից լետոյ, հետևելու, նոցա կեանքով ասլրելու, կոլրզկուրայն ընդունելու նոցա կեանքի ամեն մի մանրամասնութիւնը, առանց լաւի ու վատի մէջ խտրութիւն անելու, պախարակելի սովորութիւնն էր, որ ոչնչացնելով հայոց կեանքի նահապեսական պարզութիւնը, նոյն ժամանակ և պատրաստական ութիւն էլ չտալով նոցա եւրոպական կեանքով ապրելու, ձգում էր նոցա մի աներևակալելի անորոշ, խառնրինթոր մթնոլորտի մէջ և բարոյապէս ու նիւթականապէս սնանկացնում էր խեղճ ժողովուրդը: Ալաֆրանկա հայը մոռանում էր իւր լեզուն, օրինաւոր կերպով չէր սովորում և օտարինը. նա փոխում էր իւր զգեստի տարազը, ընդունում էր եւրոպական նիստ ու կացը և նոցա ապրելու եղանակը և ալդ բոլորում ծիծաղելի ծալրալեղութեան էր հասնում: Եւ ուրիշ պէս լինել էլ չէր կարող: Եւրոպայի ազգերը հասել են իւրեանց ներկալ քաղաքակրթութեան ոչ մի անգամից, այլ աստիճանաբար, դարերի ընթացքում անցնելով զանազան շրջաններից, իսկ Ալաֆրանկա հայերը կամեցել են այդ բանին հասնել միանգամից. նոքա կամեցել են մի ոստիւն անել ու ոտով-գլխով ընկնել Եւրոպայի գիրկը, որ, 'ի հարկէ, անկարելի բան էր: Դորա հետեւանքը բնականապէս եղել է այն, որ Ալաֆրանկա հայը մոռացել է իւրը-հայկականը, չի կարողացել հասնել և Եւրոպացուն. նա, ճիշդ է, ընդունել է եւրոպականութիւնը, բայց այդ ընդունելութիւնն եղել է ոչ գիտակցաբար, այլ կապկաբար նմանողութեամբ, մի խօսքով հայն ընդունել է եւրո-

պացու կեանքի միայն արտաքինը, կեղեր և անձեռնհասէ եղել իւրացնել, սեփականել եւրոպական կեանքի իսկական, ներքին խորհուրդը:

Արգեօք Ալաֆրանկան մեզանում գոյութիւն է ունեցել միայն լիսնական ու վաթսնական թուականներին: Ոչ, Ալաֆրանկայութիւնը մեր կեանքում միշտ գոյութիւն է ունեցել, գոյութիւն ունի և այժմ, գոյութիւն պիտի ունենալ և ապագայում, եթէ միայն մեր կեանքի պայմանները չփոխուին: Խնդիրը միայն անուան ու յոլջորջումի մէջ է. լիսնական ու վաթսնական թուականներին Թիւրքիայում նա կոչուել է Ալաֆրանկա, Ալաֆրանկայութիւն, ուրիշ ժամանակներ և ուրիշ տեղեր նա ուրիշ պէս է կոչուել, ինչպէս, օրինակ, «Պորուսկի», «Ձակոնի», և կամ բոլորովին անուն չի ունեցել: Մենք յարմար ենք համարում հայերի այդ ընդհանուր Ալաֆրանկայի սովորութիւնը կոչել մի անունով «կապկաբար նմանողութիւն», որովհետեւ գորա ընդհանուր խորհուրդը ոչ ալ ինչ է, եթէ ոչ հալերի անդիտակցաբար, հայելու մէջ արտացոլուող պատկերի ճշտութեամբ ուրիշի կեանքին հետևելու, նմանելու ձգտումը, հակումը, որ, 'ի հարկէ, նոցա պատմական կեանքի դժբաղդ հանգամանքների արդիւնքն է:

Հայն իւր պատմական կեանքում շատ ազգերի հետ է գործ ունեցել, շատերի հետ է զփուել, շատերի հետ քաղաքական, կրօնական և առեւտրական յարաբերութիւն ունեցել. բազմաթիւ ազգեր շատ հին ժամանակներից եկել, բնակութիւն են հաստատել նոյն իսկ Հայաստանում-Ասորեստանցիք, Հրէաներ, Պարթևներ, Բուլղարներ, Ալաններ, Կասպիացիք, Զինացիք, Հնդիկներ, և ալին և ալին: Հայաստանի այդ բազմատարրութիւնը սակայն, քանի որ գոյութիւն է ունեցել հայոց պետութիւնը, չի վնասել հային. նա, ընդհակառակը, աւելի օգուտ է բերել, օրովհետեւ հայերը թէ իւրեանց թուով և թէ քաղաքական իշխանութեամբ աւելի հզօր են եղել և ժամանակի ընթացքում կարողացել են տալ նոցա իրանց լեզուն, կրօնը, սովորութիւնները, կարողացել են ձուլել, միացնել նոցա, օտարազգիներին իւրեանց հետ և իւրեանց թիւը հետզետէ ստուարացնել: Բայց երբ որ

Հայլ կորցնում է իւր քաղաքական անկախութիւնը և նորա երկիրը դառնում է ասպարէզ բազմաթիւ ազգերի՝ Պարսիկների, Արաբացիների, Սելջուկների, Բիւզանդացիների, Թաթարների, Օսմանցիների և միւսների արշաւանքների, նա շատ է վնասուում. նա չունենալով քաղաքական զօրութիւն, մի կողմից այլ ևս չի կարողանում ալդ արշաւանքների առաջն առնել, միւս կողմից էլ չի կարողանում մաքառել ալդ օտար ազգերի Հայաստանում հաստատուած մասի հետ և ամեն բանում տեղի է տալիս նոցա: Հայերի մի մասը բոնութիւնից և մայր երկրի անապահովութիւնից, թողնում, գաղթում է օտար երկրներ և ենթարկուելով օտարների ազգեցութեան, մեծ մասով ժամանակի ընթացքում կորչում, ոչնչանում և ձուլում է ուրիշ ազգերի հետ. մի մասն էլ մնալով իւր երկրում, աշխատում է այնպիսի դերք բոնել դէպի իշխողները, որ կարողանայ իւր անձը և գորքն ազատել: Նա աշխատում է այնպէս անել, որ, ըստ կարելոյն, շատ քիչ աչքի ընկնի, և ալդ պատճառով էլ սկսում է հագնուել իշխողների պէս, խօսել իշխողների լեզուով, նիստուկաց անել օտարների եղանակով, օտարների կեանքի տարազով ապլել և մինչև իսկ երբեմն օտարների կրօնական դաւանանքն ընդունել:

Դարերի ընթացքում հայերն այսպէս վարուելով, աչքի չընկնելու համար իւրեանց աղգալին բոլոր առանձնալատկութիւնները զոհ բերելով, վերջ ի վերջու, օտարներին նմանելու ալդ սովորութիւնն այնպէս ամրացնում, այնպէս արիւն և մարմին են դարձնում իւրեանց մէջ, որ երբ մի առանձին կարիք էլ չի լինում ալդպէս վարուելու, ինչպէս, օրինակի համար, լիսնական և վաժմանական թուականներին Ալաֆրանկա ապրելը, նոքա դարձեալ ձեռք չեն կարողանում քաշել ալդ սովորութիւնից, որովհետեւ դա նոցա մէջ արդէն ազգալին բնորոշ լատկանիշ էր դարձել: Դորա հետևանքը պէտք է համարել այն հանգամանքը, որ հայն ամեն տեղ որ ազգի ու երկրի մէջ և ապրել է, նոյն ազգի ու երկրի ժողովրդի իսկական տիպարն է ներկայացրել: Հայլ Պարսիկների մէջ եղել է կատարեալ

Պարսիկ, Տաճկի մէջ—Տաճիկ, Թաթարի մէջ—Թաթար,
Քուրդի մէջ—Քուրդ, Զերքեզի մէջ—Զերքեզ, Հունգա-
րացու մէջ—Հունգարացի, Լեհացու մէջ—Լեհացի, Մալ-
դաւանցուց մէջ—Մալդաւան, Ուլախաց մէջ—Ուլախ,
և ոչ մի տեղ բնիկ հայ իւր բոլոր գոյներով ու տուանձ-
նալատկութիւններով։

Մեր օրերում երբ կրթութիւնը բաւականին տա-
րածուել է մեր ազգի մէջ, երբ շատ շատերի աշքերը
բացուել են ճանաչելու չարն ու բարին, երբ ամեն
տարի բազմաթիւ հայ պատանիներ են աւարտում և
մտնում մեր ժողովրդի զանազան խաւերի մէջ, պէտք
էր կարծել, որ այդ գժբաղդ սովորութիւնը, եթէ ոչ
իսպառ վերջացած, գէթ շատ զգալի կերպով պակասած
լինի մեր մէջ։ Բայց մենք բոլորովին հակառակն ենք
տեսնում։ Կապկաբար ուրիշներին նմանելու սովորու-
թիւնը, ընդհակառակը, գնալով զօրանում է և մեծ
ժաւալ է ստանում մեր մէջ։ մոռացւում է լեզուն,
հայկական լաւ, ընտիր սովորութիւնները, ընդունւում
է կոլրզկուրայն, անգիտակցաբար ամեն բան և աւելի
մեծ քանակով վատը, քան թէ լաւը, որ և բարոյապէս
մեծամեծ վնասների պատճառ է լինում մեր հասարա-
կութեան համար։ Ուշադրութիւն դարձրէք, հետեւեցէք
մեր հարուստ դաստիարգի նիստ ու կացին, սովորու-
թիւններին և ապրելու եղանակին, և գուք կսարսա-
փէք, տեսնելով վարք ու բարքի այն խառնուփնժորու-
թիւնը, այն բարելոնեան լեզուախառնութիւնը, այն
տարօրինակ կոնտրաստները, այն հրէշալին աշխարհա-
հայեցողութիւնը, որոնք տիրում են մեր կարողութիւն
ունեցող ընտանիքներում։ Դարաբաղցի «այեանը», որ
երեկ միայն օլմաղով պինդ կապում էր բերանը, այսօր
արդէն իւր զգեստները Պարիզի ամենալայտնի դերձակի
մօտ է կարել տալիս։ Սիսեանի ուշպէրը, որ նոր միայն
թարաքեամի մորթէ գտակ էր գնում գլխին, այսօր
արդէն ցիլինդր է ծածկում, անգլիական երկար սիւր-
տուկ հազնում, մօնոկլ դնում աչքին։ Երեկուալ Մշեցի
համալի ալսօր արդէն թողած իւր լեզուն, Փրանսերէն
է կոտրատում, և այլն և այլն։ Մեր բնակարանները
կը կնալարկ ու եռալարկ են, կարասիները բերել տուած

մալրաքաղաքներից. մեր տներում վխտում են բազմաթիւ սպասաւորներ՝ թուրք, չեղքէզ, իմերէլ, գերմանուհի, ֆրանսուհի, մի խօսքով զանազան ազգութիւնների պատկանեալ «Մրտօներ» և «Կիրակոսներ». մեր երեխաններին դաստիարակում են զանազան «Նարըներ», «Ժերոմներ», «Ճելոստներ», «Պուքիաթօներ», «Ճէքսըններ», — որը պար է սովորեցնում, որը նկարչութիւն, որը ջութակահարութիւն, որը լեզուներ, որոնք բոլորը միասին պատրաստում են մեզ համար մի սերունդ, տունց իդէալի, առանց սկզբունքի, ինչպիսին էին «Ալաֆրանկալի» Պասքալը, Մառգրութը, Յակոբիկ էֆէնդին և միւսները:

Ի՞նչ փրկութիւն, ինչ ելք կալ մեզ համար գորանից. Մեր մատաղ սերնդին հարկաւոր է առողջ, խելացի ընտանեկան դաստիարակութիւն, մեր ծնողներն ինքեանք պէտք է յաճախ փոխարինեն վարձկան ուսուցիչներին, դառնալով իւրեանց զաւակների համար մալրենի լեզուի ու գրականութեան ուսուցիչ. մեզ հարկաւոր է մշակել, զարգացնել մեր գրականութիւնը, որ նա լրացնէ մեր ընտանեկան դաստիարակութեան պահանը, թերին. մեզ հարկաւոր է առողջ, լուրջ մամուլ, որ զեկավար հանդիսանալ մեր հասարակութեան կարծիքներին, վերջապէս, սեզ հարկաւոր է հայկական բեմինքնուրոյն թատերական գրուածների ներկայացումներով. Մեր երիտասարդները պէտք է անդադար կարգան և իւրեանց մտքում տպաւորեն այն հրաշալի խօսքերը, որ սորանից շատ տարի առաջ հանգուցեալ Աքովեանը քաղցր նուագի պէս հնչեցրել է մեր ականջին. «Ճեզ եմ ասում, ձեզ՝ Հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անումին մեռնեմ, ձեր արևին դուրբան. տասը լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատը զայիմ բռնեցէք»: Մեր ծնողները պէտք է զարթեցնեն իւրեանց զաւակների մէջ այն ջերմ սէըը դէպի մալրենի լեզուն, մայրենի գրականութիւնը, գէպի հարազատ լաւ սովորութիւնները, նուիրական աւանդութիւնները, որ մի ժամանակ ստիպել է ոչ բանաստեղծ զիտնական հրապարակախօս Ս. Նազարեանցին մի ըստէ ոգևորուել, բանաստեղծ դառնալ և քաղցր երգով գրուատել մեր ա-

կանչի և հոգու համար ախորժ և ընտանի մալրենի խօսքը.—

Մալրենի լեզու, մալրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար՝
Առաջին դու խօսք, ականջիս հասած,
Դու սիրու քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովանք տկար,
Հընչում ես իմ մէջ դու միշտ անդադար...
—Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
Սուրբ է, այն, միւս այլ ձեւ ու ոճը。
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սըրտի սէրը յայտնել արժան էր,
Իմ երանական մտածութիւնը—
Ապա կը խօսեմ իմ մօրըս խօսքը:²¹⁾

Եւ երբոր այս բոլորն ալսպէս լինի, կարճ միջոցում կպատրաստուի մի թէկ փոքրաթիւ, բայց մտքով, մարմնով և ուղղութեամբ մի առողջ սերունդ, որ մեր կեանքում կլատարէ այն «Deus ex machina»-ի դերը, որ «Ալաֆրանկարի» մէջ կատարում է ծերունի Մաթոս աղապան. նա խարազանը ձեռքին կմտնէ մեր սուտ եւրոպացի ընտանիքները և գերդաստանները և բացագոնչելով «Խէրն անիծեմ էդ ալաֆրանկալին», կ'վանէ կապկաբար նմանողութիւնը, անգիտակցաբար ընդունած վնասակար խեղկատակութիւնները, միմոսութիւնները. նա կմտնէ մեր սուտ ազնուական սալօնները և զարդացած Մաթոսի պէս գոշելով «Զափուխ եխըլըն շուտան» կամ «Կալտէ, քեփիրլեր, եխըլըն շուտան» կհալածէ շուալլութիւնը, վատնողութիւնը, գեղխութիւնը, անառակութիւնը, անբարոյականութիւնը և դոցա սպասաւոր ու ներկայացուցէ ձրիսկեր Մրտօններին, Կիրակոսներին, Միքմիդոններին, Պուավէններին, Շարըլներին, և ժողովելով մեր զանազան և բազմաթիւ Մառդըռիթներին, Պասքալներին ու Սահառունիներին, կը

²¹⁾ Ա. Նազարեանցի «Մայրենի լեզու ոտանաւորը որից մենք հանում ենք այս հատուածը, նմանողութիւն կամ, լաւ է ասել, թարգմանութիւն է գերմաներէնից.

հագցնէ նոցա նախկին տարազը և կտանէ վելալէթը, ալսինքն կմաքրէ, կդարձնէ նոցա նախկին անարատութեան, որպէս զի նորից նոր, առողջ հիմքի վերալ դնէ նոցա դաստիարակութեան գործը:

ԴԼՈՒԽ Է.

«Վարդենիք» ը մի փոքրիկ հատւրիկ է, որ պարունակում է իւր մէջ 52 հատ ոտանաւոր, բաժանուած երեք գրքի և նուիրուած հեղինակից իւր քրոջը նորա հարսանիքի առթիւ: Թէ ինչ խորհուրդ ունի «Վարդենիք» անունը, ինչ բնաւորութիւն ունին նորա մէջ պարունակուած ոտանաւորները և առհասարակ ինչպիսի պարագաներում է հրատարակուել այդ գերքը, — այդ բոլորը պարզում է ինքը հեղինակն իւր յառաջսաբանում որ կրում է «Առ ընթերցանելիս» խորագիրը: «Վարդենիք» է գրել հեղինակն իւր գրքի անունը, որովհետև նա կամեցել է նորան կնքել իւր քրոջ վարդուհի-Աննիկի անունով, որին նա նուիրել է իւր ոտանաւորները: Այդ ոտանաւորները, նորա ասելով, գրուած են եղել զանազան ժամանակներում, զանազան դէպքերի առթիւ և բոլորը ևս նուիրուած են եղել հեռուից կամ մօտից պանդուխտ եղօրից իւր մատաղահաս քրոջը. նոքա բոլորը ևս ունեցել են զուտ ընտանեկան բնաւորութիւն և յօրինուած են եղել ոչ ընդհանուրի գիտութեան, այլ միայն քրոջ և ամենասօտ ազգականների ընթերցանութեան համար, և եթէ հրատարակութեան են յանձնուել և ալդախով ընդհանուրի սեփականութիւն դարձել, դորա պատճառն ուրիշ բան չի եղել, եթէ ոչ ուրախալի դէպքը-քրոջ հարսանիքը և բարեկամների թախանձանքը: Ոտանաւորների մէջ երգուած սէրն ոչինչ կապ չունի երկրային, նիւթական սիրոյ հետ. դա, հեղինակը պարզաբանութեամբ, մի պղատոնական, երկնալին սուրբ սէր է, որ միայն կարող է լինել երկու հարազատի եղբօր և քրոջ մէջ, որովհետև, ինչպէս ասում է Ներսէս Լամբրոնացին, «Զիք ինչ քաղցր որպէս զսէր քուեր առ եղբալըն»:

Սակայն մեզ թւում է, որ հեղինակն իւր այդ մեկ-

նողական լառաջաբանի մէջ շատ էլ անկեղծ չէ։ Մենք կարծում ենք, որ քրոջ անունն ալդտեղ միայն մի անմեղ դիմակ է, որի տակ ծածկուելով հոգևորական բանաստեղծը, միջոց է ունեցել արձակ կերպով արտայալտելու իւր ներքին հակումները, իւր զգացմունքն իբրև սոսկ մարդ, իբրև սիրահար, որ ուրիշ կերպ կարող չէր, անյարմար էր մի կուսակրօն հոգևորականի։ Հատորիկը բացւում է մի ոտանաւոր ընծալականով, որ կրում է «Քոյր իմ» վերնագիրը և որի մէջ հեղինակը դառնում է իւր քրոջը և նորա միտն է բերում, թէ ինչպէս նա, երբ դեռ բաժանուած, հեռացած չէին, երբ դեռ միասին էին ապրում, ամեն օր առաւոտեան կանուխ սովորութիւն ունէր իջնելու պարտէզը և վերադառնալ այնտեղից, ծոցը մի վարդի փունջ լեռած։ Միտն է բերում նոյնպէս, թէ ինչպէս նա ալդ ժամանակ մօտենալով իրան, սիրոլ համբուր էր տալիս և բերած վարդը կախում էր նորա քնարից, միտն է բերում, վերջապէս, թէ նա իւր սպիտակ քողի մէջ ալն ժամանակ ալնքան գեղեցիկ էր, որ նմանում էր ալդի հրեշտակին, լուսը ճակատին, վարդը ծոցին։ Ճես այն ժամանակ, ասում է նա, չունէի մի ալնպիսի քան, որ կարողանալի դորա փոխարէնը քեզ վերադարձնել, բացի մի զերմ համբուրից, որ դըռշմում էի քո կուսական ճակատին, և իմ քնարիս սրտառուչ և տիրազգաց գեղգեղանքից, որ հնշեցնում էի քեզ համար։ Ալժմ, աւելացնում է նա, երբ «Նիմէնը» պակում է քեզ, շտապում եմ և ես քեզ մի բան նուիրել. բայց ինչ կարող եմ և ինչ արդեօք աւելի արժան է, որ տամ քեզ։ —

Ի վալր լորմոյն առի զքնար,
Քընար պատեալ ի սուգ և ստուեր,
Զփունջ վարդիցդ յեռեալ ի փունջ
Եւ հիւսեցի լուրը մանեակ,
Եւ առաքեմ քեզ ի պըսակ
Վարդունս ուր դեռ բուրէ քո շունչ։
Յօրէ լորմէ քնիր դու գնացիր
Եւ զիխնդ և լուս ընդ քեզ տարար
Պըսակ զոր տալ Նիմէն, ով կոյս,
Լուսաբորբոք յականց ցոլալ։

Իսկ զոր բերեմ խոնտըհ ընծալ
Շողալ և եթ լիմ արտասուս:

Դորան, այդ ընծայական ոտանաւորին հետևում են մի շարք զուտ քնարերգական-սիրահարտկան փոքրիկ սակաւավանկ բանաստեղծութիւններ, որոնք, պէտք է խոստովանել, գեղեցիկ են և՝ ձևով և՝ բովանդակութեամբ և, որ գլխաւորն է, տաք զգացմունք են պարունակում իւրեանց մէջ, գոնէ, այն չափով, որ չափով այդ հնար է եղել յալտնել հեղինակին մի մեռած լեզուով: Եւ մենք, հակառակ հեղինակի յալտնած կարծիքին, կասենք, որ դոքա, այդ բանաստեղծութիւնները չնայելով իւրեանց սաղմոսից առած մակագիրներին, չնայելով նոցա մէջ յաճախ կրկնուող քոյր և Անիկ բառերին, չնայելով նոցա մէջ վխտող կրօնական խորհրդացութիւններին, ոչ մի կապ չդւնին ոչ երկնքի և ոչ Պղատոնի հետ. դոքա արտայալտում են զուտ աշխարհալիին, մարդկալին սէրն իւր քոյր մանրամասնութիւններով, իւր բոլոր ելեէջներով, մարդկալին սրտի բոլոր զգացմունքներով:

Որ այդ ալդպէս է, որ քոյր խօսքը միայն մի բարակ շղարշանման դիմակ է, որի տակից աղօտ կերպով երևում է գրուածքի իսկական դէմքը, որ Անիկ անունը միայն մի թափանցիկ քօղ է, որ իւր միջից դուրս է ցոլցնում իսկականը, էականը, այդ երևում է, բացի բանաստեղծութիւնների ընդհանուր ձևից ու բովանդակութիւնից, և այն հանգամանքից, որ հեղինակն ինքն էլ, չնայելով իւր մեկնողական յառաջաբանին, դարձեալ կասկածել է, թէ ընթերցողները կարող են հասկանալ իւր գրուածքի ներքին միտքը և ուրիշ մեկնութիւններ տալ, ուստի և աշխատել է աւելի ևս վարագութել և հէնց ալդ նպատակով հետևեալ տողերն է նուիրել ընթերցողներին իւր նոյն յառաջաբանի վերջում, տողեր, որոնք թէե իբրև սրտի քնարերգական գեղեցիկ զեղմունք շարժում են մեր սիրտը, բայց ամենակին չեն համոզում մեզ. — «Ընթերցող դու, — եթէ սուրբ իցէ, ասում է նա, սիրտ քո ի վայրաքարշն կրից, եթէ իցէ և քո քոյր սիրասուն և վարդափթիթ պարզեալ քեզ առի լԱստուծոյ, քաղցրացուցանել զաւուրց քոց դառ-

նութիւն, իբրև զշուշան ի հովիտս մահու, որպէս ա-
սեն գիրք, —և քեզ նուիրէ զտաղքս՝ ոմն համանման
քեզ բարեբաստիկ եղբարը, որ զոմանս և եթ ի սրտին
զգացմանց ողեաց աստանօր, և զայն ևս լոլժ տկար
քան զոր զգալրն և քան զոր զգալ անշուշտ և քոյդ
սիրտ եղբայրական։ Իսկ և դու, —որոյ առաջի ծաղու.
թութիցի անուն սուրբ և անախտն սիրոյ, և որ՝ զոր ոչն
զգաս սրբութեամբ՝ համարես թէ և ալլոց սիրտք ան-
մասն իցեն լերկնատրոփ բարախմանց անտի եղբայրա-
կանն սիրոյ, —թող աղէ և անց. ոչ վասն քո է մատե-
նիկդ։

Ոյս էլ դեռ բաւական չհամարելով, վարդապետ-
բանաստեղծը, իբրև հաստատութիւն և ապացուց իւր
ասածներին, մէջ է բերում և իտալացի Թոմազոլի
խօսքերը, որ կամենալով ապացուց տալ, թէ քրոջ և եղ-
բոր մէջ եղած սէրը մեծ է և մաքուր, վկայ է բերում
Սոլոմոնի «Երգ երգոց»-ը, որի մէջ «քոյլո» և «հարս»
բառերը գործ են ածուած անբաժան միմեանցից։

Սակայն մեզ թւում է, որ ալդ էլ համոզեցուցիչ
չէ, որովհետեւ թէև ճիշդ որ եղբօր և քրոջ մէջ եղած
սէրը փոխագարձարաց և ջերմ է լինում, բայց ալդ
սէրն ոչինչ նմանութիւն, ոչ մի կապ չունի հարսնու-
թեան սիրոյ հետ. դա ազգակցական, արենակցական
համակրութիւն է, դա այն փոխադարձ սուրբ հակումն
է, կամ այն անախտ սիրոյ սուրբ կրակն է, որ բնու-
թիւնը վառում է մեր սրտերում դէպի մեր հարազատ-
ները մեր ծննդեան հէնց առաջին օրից և, գուցէ, մեր
սաղմալին դրութեան սկզբնաւորութիւնից։ Ինքը Սո-
զոմոնի «Երգ երգոց»-ը ևս դեռ մեզ ոճով ու տեղով
լայտնի չէ, թէ իսկտպէս ինչ տեսակ գրուածք է։ Ճիշտ
է, նա մտնում է Աստուածաշնչի կանոնական համարուած
գրքերի շարքը և կարդացւում եկեղեցում որոշեալ
ժամանակներում, ճիշդ է, մեր եկեղեցու հալրերը նորա
սիրային բովանդակութիւնը հոգեսոր տեսակէտից, կրօ-
նական մտքով են հասկանում ու մեկնում, բայց գիտ-
ականներից շատերը բառացի են հասկանում նորա
միտքը և համարում են նորան եբրայական գեղեցիկ
վիպասանութիւններից մէկը, ուրիշ ոչինչ։

Ալդ էլ, վերջապէս, բաւական չհամարելով, վարդապետը գրում է մի ոտանաւոր «Սիրեմ զքեզ» վերնագրով, որի մէջ նա ձգտում է բացատրել իւր դէպէ քոյլը ունեցած սիրո տեսակը, որակը, որպէս զի այլ ևս ոչ մի կասկած չմնալ, որ իւր քըոջը նուիրած տաղերի մէջ արտալալուած սէրը սուրբ է, մաքուր է, երկնալին է, և ալլն և ալլն:—

Սիրեմ ոչ ի սէր	Ս.լլ սիրեմ ի սէր
Որ լոգիս անդ մեր	Որ զհրեշտակս յեթեր
Տենչ և թունդ հրատապ	Վառեալ ընդ միմեանս
Ամբոխս և տագնապ	Սուրբ յաղապատանս,
Ցուգէ վեր ի վեր:	Կապէ ոգեյեռ
Սիրեմ ոչ ի սէր	Ս.լլ սիրեմ ի սէր,
Որ կեղեքէ վէր.	Յո զվարդին թերթեր
Որ ըզիսէթ և զահ	Սիրէ սոխակիկ,
Տայ ի սիրտ և մահ:—	Եւ յերգս անուշիկ
Ոչ, լայդ ոչ ի սէր.	Մըւմընջէ զգեշեր
Ա.լլ սիրեմ ի սէր,	Ս.լլ սիրեմ ի սէր,
Զոր վըթթեցոյց Տէր,	Ոչ զսիրտ լընու մեր
Յոր չլք ինչ աշաց	Յըզմալմունս անճառ,
Ծածկել քօղազգեաց	Իբր ըզսուրբ տաճար
Ի խորշ և ըստուերո.	Խընկոց ի ճենճեր:

Թողնելով մի կրոյմ այն հանգամանքը, որ ալդ տողերով շատ դժուար է որոշել, թէ ինչ տեսակ սէր է, որ տածում է հեղինակը դէպէ իւր քոյլը, որովհետև ալդ ոտանաւորի բառերի կուտակման ընդհանուր իմաստի մէջ կորել է երկնալին և երկրալին սիրոյ մէջ եղած սահմանը, մենք մատնացոյց կանենք միայն մի քանի կէտերի վերալ, որոնցից յալտնի կլինի, որ հեղինակի սէրն էլ հէնց այն տեսակին է պատկանում, որով սիրում են հասարակ մահկանացուները, նախ, սիրոյ ամեն տեսակն էլ, լինի դա երկնալին, թէ երկրալին, յուզում է մեր մէջ «տենդ և թունդ հրատապ», որովհետև եթէ ալդպէս չլինէր, սէր էլ չէր լինիլ. սիրահարները, որ տեսակին էլ պատկանեն դոքա, ամենքն էլ ցանկանում են իւրեանց սիրոյ առարկալին մօտ լինել, միշտ տեսնել նորան, միշտ հըճուել, զմալլել նորա տեսութեամբ, միշտ լսել նորա ձալնը: Բնական է,

ուրեմն, կարծել, որ նոցա, սիրահարների մէջ ալդ ժամանակ մի բան կատարում է. նոցա հոգին յուզւում է, սիրաը տրոփում և ամբողջ էութիւնն առլցում է մի տեսակ քաղցրութեան, հեշտութեան ախորժելի զգացմունքով, որ ոչ ալլ ինչ է, եթէ ոչ նոյն իսկ տենչը կամ հրատապ թունդը: Երկրորդ, թէ անախտ և թէ երկրային սովորական սէրը փթթեցրել է մարդուս մէջ ինքը Տէրը, որովհետեւ քրիստոնէական հասկացողութեամբ երկրային սէրն էլ այնքան սուրբ է, որքան երկնայինը. նա օրհնուած է եկեղեցուց և բնութեան անլեղի օրէնքի հիման վերալ օրհնուած ու սրբագործուած է թէ մարդկալին և թէ սստուածալին օրէնքներով: Երրորդ, եթէ երկնային, մաքուր, անախտ սէրը կարելք չունի ծածկուելու, թաքչելու մութ անկիւններում, ստուերներում, նամանաւանդ և աւելի ևս կարեք չունի ամաչելու, թաքչելու մութ խորշերում սովորական սէրը, ոչ պղտառնականը: Մենք չենք հասկանում, օրինակի համար, թէ ինչու համար պիտի թաքչեն մարդկանցից և իւրեանց սէրը ծածուկ պահեն և միայն արտայալտեն խորշերում երկու սիրահարներ որոնք ուխտել, հաստատ խօսք են կապել, թէ Աստուծոյ և թէ մարդկանց առաջ ամուսնութեան սուրբ կապերով զուգաւորուելու միմեանց հետ. չէ որ թաքչելու, պահուելու սովորութիւն ունի միայն ապօրինի, միայն պոռնկական սէրը, որի մասին, յալտնի բան է, այստեղ խօսք չի կարող լինել: Զորբորդ, վարդի և սոխակի սէրը, որին նմանեցնում և որի հետ համեմատում է իւր սէրը հեղինակը, մեր կարծիքով, հէնց ամենապարզ ապացուցն է, որ նա իւր սիրոյ առարկալին սիրում է նոյն իսկ սիրով, որով ամեն մի մահկանացու սիրում և ցանկանում է փոխադարձաբար սիրուել, որովհետեւ հէնց ալդ հրաշալի ծաղկի և գերօրինակ երգչի սէրն է, որ մարդկութեան մէջ համարում է սիրահարների էմբլեմը և որ ալլաբանօրէն գովաբանում են երկու սիրող սրտի հոգեկան կապակցութիւնն երգող, գրուատող բոլոր ազգերի բանաստեղծները: Սիրող պատանին հէնց սիրում է իւր նազելի սիրուհուն, ինչպէս որ սիրում է վաղորդեան ցօղով փթթած վարդի թեր-

թերը սիրահար սոխակը. նա էլ նուիրում է իւր պաշտելին իւր սրտի բոլոր զեղմունքը, իւր հոգու բոլոր զգացմունքը, իւր տենչը, իւր բաղձանքը, իւր խոհերն ու մրմունջներն օր ու գիշեր, ինչպէս որ սոխակը հնչեցնում է ի պատիւ վարդին իւր հրաշալի դալալիկը վարդ-ալդամատն արշալուսի ծագելուց մինչև վաղորդայն արեգի ճառագալիթելը:

Մենք, ի հարկէ, դէմ չենք, որ եղբօր և քրոջ փոխադաբար դէպի միմեանց տածած սէրը ջերմագինս արտայալտուի, դէմ չենք մինչև անգամ, որ ալդ սուրբ եղբայրական սէրը դրուատուի և երգուի բանաստեղծօրէն տաղերի մէջ, եթէ միայն ալդ եղբայրը կամ քոյլը բանաստեղծական շնորհք ունին, բայց անպայման դէմ ենք և անբնտկան ենք իսկ հսկ համարում, որ այդպիսի սուրբ սիրոլ դրուատիքը հեշտասիրութեան, էրոտիքականի հասցրած աստիճանով ու չափով արծարծուի. Ո՞ր եղբայրը կհամարձակուի գովաբանել և երգի նիւթ շինել իւր պարկեշտասուն «քրոջ քնքոլց իրանը», «վարդակաթ ալտերը», «աիրակաթ աչքերը», «պալծառ լանջը», «ձիւնաթոլը ույը», «փափկիկ ծոցը», և այլն և այլն, ինչպէս ալդ արել է Խորէն վարդապետը. Ո՞վ, վերջապէս, կհամարձակուի երանի տալ հայրենի տան և յարկին, որ տեսել է իւր քրոջ մերկ մարմինը, ինչպէս մի տեղ «Քոյլն հրեշտակաց» տաղի մէջ թոյլ է տուել իրան անել մեր բանաստեղծը. —

Ո՞վ մեր յարկաց երանի
Զի զքեզ դիտեն հոլանի,
Որմոց, ծառոց երանի,
Որ գանգ անոյշդ տան ձայնի:

Զէ, ինչ որ ուզում են, թող ասեն. «Վարդենիք»-ը այն չէ, ինչ որ մինչև ցայսօր համարուել է մեր գրականութեան մէջ և ինչպէս որ կամեցել է նորան ներկայացնել Խորէն վարդապետը: Նա զուտ սիրահարական բանաստեղծութիւնների մի հաւաքածու է, իսկ ինքը Խորէնը մի սիրահար երգիչ աշխարհալին մտքով, ուրիշ ոչինչ:

Ո՞չ հ, մենք չենք էլ հասկանում ինչ առիթ է ու-

նեցել վարդապետն ամեն տեսակ աշխատելու, ամեն միջոցի դիմելու, կամ, ինչպէս ասւում է, կաշուց դուրս գալու քօղարկելու իւր գրուածքի իսկական կերպարանքը. միթէ բանաստեղծօրէն մի բան երգելը, գովարանելը նշանափում է նոյն իսկ կեանքում իրագործելը, նոյնը գործով կատարելը: Դիցուք, նա քաշուել է իւր վարդապետական աստիճանից և աշխատել է ապացոյց տալ, որ, ինչ որ ինքն երգել է, բոլորը սուրբ է, երկնալին է, անախտ է, հօգենոր մտքով է, բայց գորահամար բաւական էր միայն լառաջաբանում բացատրութիւն տալը և ոչ դիմելն այնպիսի միջոցների, որոնց կարմիր գերձանով կարկատած լինելն ընկնում է ամեն մի ուշագիր ընթերցողի աչքին: Խորէնն ալդ դէպքում առողինը չէ մեր գրականութեան մէջ և վերջինն էլ չի լինելու, որ ինքը հօգենորական լինելով, աշխարհայինի լետեկից է եղել, աշխարհը չի մոռացել, ինչպէս որպահանջում է դարերի ընթացքում սրբագործուած վարդապետական կեանքի ճգնաւորական խստութիւնը: Ահա և մեր միջնադարեան բանաստեղծութեան պարգուիներից մէկը – Յովհաննէս Թլկուրանցին, որ կուսակրօն հօգենորական լինելով հանդերձ, գեղեցիկ ժողովրդական վարվուն լեզուով սիրահարական տաղեր է երգել և ժողել մէ զ ժառանգութիւն:

Յայտնի է, որ մի որ և է գրական երկի մէջ արտացոլում է դոյն իսկ երկի հեղինակի լիակատար պատկերը, ալնպէս որ կարդալով մի որ և է երկ, կարելի է լաճախ շատ ճիշտ եղբակացութիւն անել նորա հեղինակի մտաւոր և հօգեկան կարողութիւնների մասին, կարելի է իմանալ, թէ հեղինակն ինչ հակումների, ինչ ձգումների, ինչ զգացմունքների տէր է, թէ ինչ խոհեր ու բաղձանքներ են ոգենորում նորան, ինչ աստղ է առաջնորդում նորան, վերջապէս, կարելի է իմանալ նորա բարոլականը, նորա ներքին աշխարհը, և այլն և ալլն: Այս տեսակէտից նայելով «Վարդենիք» ի վերայ, մենք կարող ենք համարեա թէ առանց սխալուելու ասել, որ դա Խորէնի ներքին աշխարհի ամենաճիշդ պատկերն է, որի մէջ, ինչպէս ջինջ հայելու մէջ, ցոլում է վարդապետի ամբողջ թաքուն աշխարհը: «Վարդե-

նիք»-ը Խորէնի մտքերի, ցանկութիւնների, զգացմունքների մարմնացումն է, մենք աւելին կասենք, դա հէնց ինքը Խորէնն է իւր բոլոր պակասութիւններով ու առաւելութիւններով, իւր բոլոր սրբութեամբ ու մեղաւորութեամբ, իւր բոլոր մարդկային թուլութիւններով և իւր մէջ վառուող, բորբոքուող աստուածալին կալծով ու կրտկով:

Խորէնը, ինչպէս առաջ նկատել ենք, ծնուած չեղել հոգեսորական լինելու համար, բայց հանգամանքների բերմամբ կուսակրօն է դարձել: Ալդ պատճառով հէնց սկզբից նորա մէջ առաջ է եկել մի տեսակ երկուորութիւն: Նորա ներքինը, բնական հակումը միշտ ձգտել է դէպի երկնալինը, միշտ վագել է աշխարհի յետևից, իսկ արտաքինը, հոգեսոր կոչումը ստիպել է նորան սլանալ դէպի երկինք: Նորա ներքինը միշտ վարդագոյն է եղել, միշտ սրտի տրոփումն, միշտ լուս միշտ սէր է երազել, երգել, ցանկացել, արտաքինը միշտ սալմոսել, միշտ փաթաթուել ու վերարկուի մէջ: Եւ դրանից, ալդ երկուորութիւնից նորա մէջ առաջ է եկել երկու ներհակ զգացմունքի մաքաւում՝ պարտականութեան և սրտի հակումի, որ ստեղծել է նորա համար մի սրտամաշ ողբերգական դրութիւն, որ նորան տանջել, չարչարել և թունաւորել է նորա ամբողջ կեանքը: Դրանից է, որ նորա երգերը բոլորը լաց են լինում, բոլորը հեծում, տխուր, վշտահար հառաջներ արձակում: չկայ յոյս, չկայ պայծառ ապագայ, ալլ գերեզման, սառը, մութը գերեզման:

Իզուր չէ, որ Խորէնն իւր «բաժին իմ» ոտանաւորում անենատխուր և օգաւոր կերպով է ներկայացնում իւր վիճակը կամ բաժինը, հակադրելով նորան իւր սիրուհու պայծառ և ուրախալից վիճակին ու բաժնին: «Իմ բաժինն է, ասում է նա, նմանել իւր բունից կըտրուած և ցուրտ հողմերից այս ու այն կողմ, մի վշտից դէպի միւսը վարուած տերեւիկին: իմ բաժինն է նմանել մի եղէգնիկի, որ բանում է մեռեալ լճի տղմոտ ափին և անդադար երերւում ու ծըփծըփում է. իմ բաժինն է նմանել մի ամուլ դաշտի, որ միշտ մնում է տրտում, խոպան, որտեղ չի բանում ոչ մի դալար ա-

քոտ, որ ուրախացնէր ուղևորի հոգին. իմ բաժինն է լինել, ինչպէս մէնիկ բուն, որ անդադրում սգում ու ողբում է, որ գիշեր ու ցերեկ մնչում, հեծում է, մահ կը լով սրտում: Եւ յուսահատ քնարերգակը, վերջ ի վերջով, շախցախում, փշրում է իւր «սգաւոր և «ստուերապատ» քնարը և դորա հետ միասին պատառ-պատառ է անում իւր սիրտը, որովհետեւ ալլ ևս յոյս և միսիթարութիւն չի մնում նորան այս աշխարհում, ալլ ևս լուս, ալլ ևս յոյզ չի սպասում նորան այս կեանքում:

«Ալլ ևս ինչու համար ես, ով քնար, ողբում է նա իւր «Քնար պանդխտին» ոտանաւորում, եթէ դու խեղճ պանդխտին չես միսիթարում, եթէ դու չես կարողանում անլոյս սրտին մի որ և է յոյս տալ: Քո թելերը, որոնք թրթուում էին հրճուանքի ջերմ զեփիւով, ալժմ աչքի ցօղով տամկացած սօսիների ոստերի պէս կախուած են լուռ. նոքա լոիկ կախուած են, մինչ իմ սիրտս փոթորկում է, ինչպէս ալէկոծ ծովը, մինչ իմ շրթունքս սարսուելով, մահաշունչ հառաջանք է արձակում, մինչ ոչ ոք իմ լուսահատ ողբիս սիրավառ սփոփիչ չի լինում: Ապա ինչու համար հաւատարիմ պանդուխտը քեզ ձգեց իւր ուսը, թողեց բոլոր աղեկէզ վալելքները և միայն քո, քո վերալ յուսը դրեց. ինչու համար, ուրեմն, նա քեզ պիտի գրկէ, եթէ դու բոլորովին անզգալ ես նորա բորբոքուած սրտի հանդէպ. ինչու համարնա իւր անախտ շրթունքով քեզ պիտի համբուրէ, քանի որ դու նորա գէմ կանգնած ես ցուրտ ու լուռ, ինչպէս համը գերեզմանաքարը: Դեռ գերեզմանի քարն ալնպէս լուռ չէ, ալնպէս անխիրտ չէ. նորա լուսապատար լոռութիւնը խօսում է յուսահատ սրտի հետ... Ահա ալս պատճառով, ուխտադրուժ քնար, թողնում է քեզ և պանդխտը, ինչպէս վերջին յուսը. գնա, փշրուիր, և զարնուելով քարի, փշի, և արձագանգ տուր նորա սրտին. գնա, փշրուիր և ցնդուիր այն կողմերը, որտեղ ցան ու ցիր են եղել նորա սրտի պատառները. գնա, փշրուիր և դու մեռիր, ինչպէս հէդ պանդխտի սիրտը:

Ճիշդ է, Խորէնն աշխատել է իւր մէջ մաքանող վերոյիշեալ երկու ներհակ զգացմունքը հաշտեցնել մի-

մեանց հետ—թող վառուի կըակը, թող բորբոքուի կայծը, միայն որ նա ուրիշի, օտարի աչքին չընկնի, ալլ մոխ-ըի տակ պլպլալ, սև վերարկուի տակ ցոլալ,—բայց այդ նորան չէ լաջողել։ Առաջ է եկել «Վարդենիք»-ը, որ իւր արտաքին կեղևով վեղարը գլխին, սև վերարկուն հագին սաղմոսարանն ու ատէր-ողորմեան» ձեռքին վար-դապետ Խորէնն է, իսկ ներքին բովանդակութեամբ աշ-խարհը սիրող, գեղեցիկն ու վսեմն երգող, սէրը դրուտ-տող բանաստեղծ Խորէնն է։

ԵՐ. ՇԱՀԱԶԻՋ

(ՄՆԱԳԵԱԼԸ յաջորդ համարում):
